



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ



ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ
ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
ԽԱՎԱԿՈՑՈՒԱԳԻՏՆ. ԿԵՆՏՐՈՆ

ECOLUR
NEW INFORMATIONAL POLICY IN ECOLOGY

«ՉԱՇԽԱՏՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՃԹՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն



Երևան 2021 թ.

Սույն հաշվետվությունը պատրաստվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից իրականացվող «Չաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների պատասխանատվությունն ԱՃԹՆ գործընթացում» ծրագրի շրջանակներում՝ փորձագետ Ռոզա Ջուլիակյանի, փորձագետ «Էկոիրավունք» ՀԿ-ի նախագահ, Արթուր Գրիգորյանի, Ծրագրի համակարգող, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ Ինգա Զարաֆյանի, փորձագետ, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի փոխնախագահ Վիկտորյա Բուռնազյանի, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի լրագրող Քրիստինե Տեր-Մաթևոսյանի մասնակցությամբ: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) աջակցությամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:

Սույն հաշվետվության մեջ արտահայտված տեսակետները միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հապավումներ-----	3
2. Ներածություն-----	4
3. Մեթոդաբանություն-----	5
4. Ընդհանուր տեղեկատվություն ՀՀ-ում մետաղական հանքավայրեր շահագործող և սույն Ծրագրով ուսումնասիրված կազմակերպությունների մասին-----	7
5. Ուսումնասիրված ընդերքօգտագործող կազմակերպությունների և հանքավայրերի համառոտագրերը-----	17
6. Տրամադրված հանքավայրերի չշահագործման/մասնակի շահագործման սոցիալ-տնտեսական հետևանքները և կնքված ընդերքօգտագործման պայմանագրերի ընդհանուր թերությունները-----	46
7. Իրավական վերլուծություն-----	48

Հապավումներ

Ա&ԹՆ	Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԲՇԽ	Բազմաշահառու խումբ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը պատրաստվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից իրականացվող «Հաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների պատասխանատվությունն ԱՃԹՆ գործընթացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվել է ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) աջակցությամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:

Ծրագրի նպատակն է՝

1. Նպաստել մետաղական հանքերի շահագործման թույլտվություններ ունեցող, սակայն չաշխատող կազմակերպությունների (Ընդերքօգտագործող) պատասխանատվության բարձրացմանը ընդերքօգտագործման պայմանագրային և այլ թույլտվություններով ամրագրված պարտավորությունների կատարման նկատմամբ:

2. Նպաստել մետաղական հանքերի շահագործման թույլտվություններ ունեցող, սակայն չաշխատող կազմակերպությունների հաշվետվողականության և պատասխանատվության բարձրացմանն ազդակիր համայնքների նկատմամբ:

3. Իրականացնել տեղեկատվական քարտզարշավ՝ նպաստելու չաշխատող մետաղական հանքարդյունաբերողների կողմից ընդերքօգտագործման և այլ թույլտվություններով ստանձնած պարտավորությունների կատարմանը, աջակցելու ազդակիր համայնքների իրազեկվածության բարձրացմանը և շահերի պաշտպանությանը:

Ծրագրի նպատակների իրականացման համար դրվել են հետևյալ խնդիրները՝

1.1 Բացահայտել 20 մետաղական հանքերի ընդերքօգտագործման թույլտվություն ունեցող, սակայն չաշխատող/մասնակի աշխատող կազմակերպությունների ընդերքօգտագործման պայմանագրային և այլ թույլտվություններով ամրագրված պարտավորությունները և դրանց չկատարման հնարավոր պատճառները և պատասխանատվությունը:

1.2 Բացահայտված փաստերի հիման վրա կազմել և ներկայացնել հաշվետվություն և խնդիրների վերացմանն ուղղված առաջարկներ ԱՃԹՆ ԲՇԽ-ին և հանրայնացնել հաշվետվությունը:

2.1 Հաստատել կապեր ազդակիր 26 համայնքների և բնակավայրերի հետ, որոնք գտնվում են հանքարդյունաբերական գործունեության ազդեցության տակ:

2.2 Իրազեկել տեղի բնակչությանը ընդերքօգտագործողի՝ ՀՀ օրենսդրությամբ ամրագրված համայնքի առաջ պատասխանատվության, ընդերքօգտագործողի կողմից ստանձնած պարտավորությունների մասին և դրա հետ կապված ԱՃԹՆ գործընթացի մասին:

2.3 Անցկացնել հարցազրույցներ և պարզել.

ա) ինչքանով են տվյալ Ընդերքօգտագործողի ծրագրերը ներառված համայնքի զարգացման ծրագրերում

բ) ընդերքօգտագործողի գործունեության հետևանքները տվյալ բնակավայրի սոցիալ-տնտեսական, բնապահպանական վիճակի վրա

2.4 հավաքագրել առաջարկություններ ընկերությունների գործունեության հաշվետվողականության, թափանցիկության և համայնքի նկատմամբ պարտավորությունների կատարման վերաբերյալ

2.5 ստացված տվյալների հիման վրա կազմել չափաստող/մասնակի աշխատող, սակայն շահագործման թույլտվություն ունեցող կազմակերպությունների՝ 20 ընդերքօգտագործողների ազդակիր բնակավայրերի սոցիալ-էկոլոգիական և տնտեսական ազդեցության գնահատման հաշվետվություն

2.6 սոցիալ-էկոլոգիական և տնտեսական ազդեցության գնահատման հաշվետվությունը ներկայացնել ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամներին նրանց դիրքորոշումը ստանալու նպատակով և հանրայնացնել:

3.1 Անցկացնել տեղեկատվական քարոզարշավ, ապահովել Ծրագրի գործողությունների մասին տեղեկատվական հոսք տեքստային, ֆոտոնյութերով և տեսանյութերով, հաշվետվությունները հրապարակել www.ecolur.org կայքում, տեղեկատվությունը տարածել սոցիալական ցանցերում:

3.2 Նկարահանել տեսաֆիլմ Ծրագրի արդյունքների վերաբերյալ և անցկացնել ֆիլմի օն-լայն շնորհանդես:

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի նպատակների իրականացման համար օգտագործված մեթոդաբանություն

Ծրագրի իրականացման համար պահանջվող տվյալների հավաքագրումն իրականացվել է պաշտոնական փաստաթղթերի հետազոտությունների, ոլորտում տիրող փաստացի իրավիճակի, գիտական վերլուծությունների, ոլորտում Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի իրականացրած ստուգումների, ինչպես նաև ՀԿ-ների կողմից իրականացված մշտադիտարկումների արդյունքների հիման վրա:

Վերլուծությունը կատարվել է փաստերի համադրմամբ: Մշակվել է ստուգաթերթ, որը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման հարցերը (Հավելված 1), պատրաստվել են ազդակիր բնակչությանն ընդերքօգտագործողի՝ ՀՀ օրենսդրությամբ ամրագրված համայնքի առաջ պատասխանատվության, պարտավորությունների և դրա հետ կապված ԱՃԹՆ գործընթացի վերաբերյալ իրազեկման թերթիկներ և դրանք այցելությունների ընթացքում բաշխվել ազդակիր համայնքների և բնակավայրերի բնակիչներին և ՏԻՄ ներկայացուցիչներին:



Նկար 1. 2. Իրազեկման թերթիկների տրամադրում և տարածում ազդակիր համայնքներում

Ուսումնասիրվել են.

Ա) ոլորտը կարգավորող հիմնական իրավական փաստաթղթերը, այդ թվում՝ օրենքները, կառավարության որոշումները: Ընդհանուր իրավիճակի բացահայտման նպատակով դիտարկվել են նաև միջազգային կազմակերպությունների հաշվետվությունները և գիտական աշխատությունները, մամուլում և սոցիալական ցանցերում ընդերքօգտագործողների գործունեության վերաբերյալ հրապարակված ահազանգերը

Բ) ՀՀ ՏԿԵՆ-ի (նախկին ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների) կողմից տրված այդ հանքավայրերի շահագործման ընդերքօգտագործման պայմանագրերը, թույլտվությունները, վարչական վարույթների վերաբերյալ ՏԿԵՆ-ի վարչական ակտերը

Բ) ՀՀ ՇՄՆ-ի կողմից ընկերություններին տրված բնապահպանական թույլտվությունները և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական եզրակացությունները

Գ) 2016-2018թթ. ժամանակահատվածում ՀՀ ԱՃԹՆ շրջանակներում ընկերությունների, ինչպես նաև ՇՄՆ-ի, ՏԿԵՆ-ի, ՊԵԿ-ի հաշվետվությունները

Դ) ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կայքում տեղադրված ընկերությունների իրական սեփականատերերի մասին տրված հայտարարությունները

Ե) ՀՀ Լոռու, Վայոց ձորի, Կոտայքի, Արագածոտնի, Սյունիքի մարզպետարանների պաշտոնական կայքերում հրապարակված՝ հանքավայրերի ազդակիր համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը

Զ) Դատական տեղեկատվական համակարգի կայքում (datalex.am) հրապարակված դատական գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը

Որպես փաստաթղթերի սկզբնաղբյուր օգտագործվել են՝

- Արդյունահանող ձյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) www.eiti.am կայքը
- ՀՀ ՏԿԵՆ-ի կայքը՝ www.mtad.am
- ՀՀ ՇՄՆ-ի www.mnp.am կայքը
- Հայաստանի Իրավական Տեղեկատվական Համակարգը՝ www.arlis.am կայքը
- ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (ԷԵԲՊՆ) www.minenergy.am կայքը
- ՀՀ կառավարության էլեկտրոնային ռեգիստրի կայքը՝ <https://www.e-register.am/am/>
- «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի www.geo-fund.am պորտալը
- Դատական տեղեկատվական համակարգի կայքը՝ www.datalex.am

Պետական լիազոր մարմիններից պաշտոնական տեղեկատվություն և պարզաբանումներ ստանալու նպատակով հարցումներ են (հարցումների և պատասխանների լուսապատկերները՝ հավելվածում 2-ում) ուղարկվել:

3 -ՈՒՄ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ ՇԱՀԱԳՈՐԾՈՂ ԵՎ ՍՈՒՅՆ ԾՐԱԳՐՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

3.1 Մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների և դրանք ստացած կազմակերպությունների մասին

ՀՀ-ում 01.07.2019թ. դրությամբ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների և դրանք ստացած կազմակերպությունների մասին տեղեկատվությունը բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

h/ h	Իրավաբանական անձի անվանումը	Գործունեության իրականացման վայրի հասցեն	Թույլտվության համարը, տրման ա.ա.տ.	Գործողության ժամկետի ավարտը	Պայմանագրի համարը, տրման ա.ա.տ.	Լեռնահատ կացման ակտի համարը, տրման ա.ա.տ.
1	2	3	4	5	6	7
1	«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, Մեղրաձորի ոսկի	ՇԱԹՎ-29/057 20.08.12թ.	10.09.2023թ.	ՊՎ-057 20.08.12թ.	ԼՎ-057 20.08.12թ.
2	«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Ագարակի պղնձա մոլիբդեն	ՇԱԹՎ-29/311 05.04.13թ.	08.02.2027թ.	ՊՎ-311 05.04.13թ.	ԼՎ-311 05.04.13թ.

3	«Պարամ աունտ Գոլդ Մայնինգ » ՓԲԸ	ՀՀ Կոտայքի մարզ, Մեղրաձոր ի ոսկի /Լուսաջու րի տեղ./	ՇԱԹՎ- 29/089 12.06.12թ.	01.04.2035թ.	ՊՎ-089 12.06.12թ.	ԼՎ- 089 04.04. 14թ.
4	«Սագամ ար» ՓԲԸ	ՀՀ Լոռու մարզ, Արմանիսի ոսկի- բազմամե տա դային	ՇԱԹՎ- 29/093 20.10.12թ.	01.03.2049թ.	ՊՎ-093 20.10.12թ.	ԼՎ- 093 20.10. 12թ.
5	«Մուլտի Գրուպ կոնցեռն» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ, Մղարթի ոսկի /թիվ 8 և 5 հանքային մարմիննե ր/	ՇԱԹՎ- 29/213 20.10.12թ.	06.03.2031թ.	ՊՎ-213 20.10.12թ.	ԼՎ-213 20.10.12թ.
6	«Լեռ- էքս»ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Հանքասա րի պղինձ- մոլիբդեն /Կենտրոն ական տեղ./	ՇԱԹՎ- 29/094 16.08.12թ.	21.06.2026թ.	ՊՎ-094 16.08.12թ.	ԼՎ- 094 16.08. 12թ.
7	«Ախթալ այի լեռնահա րստաց ման կոմբինա տ» ՓԲԸ	ՀՀ Լոռու մարզ, Շամլուղի պղինձ	ՇԱԹՎ- 29/103 20.10.12թ.	04.11.2029թ.	ՊՎ-103 20.10.12թ.	ԼՎ- 103 20.10. 12թ.
8	«Ֆորչն Ռիզորսի	ՀՀ Կոտայքի	ՇԱԹՎ- 29/169	26.01.2032թ.	ՊՎ-169 20.10.12թ.	ԼՎ- 169

	ս «ՄՊԸ	մարզ, Հրազդանի երկաթ	20.10.12թ.			20.10. 12թ.
9	«Մոլիբդենի աշխարհ » ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Դաստակե րտի պղինձ- մոլիբդեն	ՇԱԹ-29/174 06.11.12թ.	06.01.2022թ.	Պ-174 06.11.12թ.	Լ-174 06.11. 12թ.
10	«Կապանի լեռնահա րստացմ ան կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Շահումյա նի ոսկի- բազմամե տ.	ՇԱԹ-Վ- 29/183 27.11.12թ.	01.04.2050թ.	ՊՎ-183 27.11.12թ.	ԼՎ- 183 27.11. 12թ.
11	«Մեզո Գոլդ» ՍՊԸ	ՀՀ Արագածո տնի մարզ, Թուխման ոսկի ոսկի	ՇԱԹ-Վ- 29/184 28.12.12թ.	21.07.2040թ.	ՊՎ-184 28.12.12թ.	ԼՎ- 184 28.12. 12թ.
12	«ԳեոՊրո Մայնինգ Գոլդ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքու նիքի մարզ, Սոթքի ոսկի	ՇԱԹ-Վ- 29/189 20.10.12թ.	10.09.2028թ.	ՊՎ-189 20.10.12թ.	ԼՎ- 189 20.10. 12թ.
13	«Զանգեզ ուրի պղնձամ ոլիբդե նային կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Քաջարան ի պղինձ- մոլիբդեն	ՇԱԹ-Վ- 29/232 27.11.12թ.	30.05.2041թ.	ՊՎ-232 27.11.12թ.	ԼՎ- 232 27.11. 12թ.
14	«Լիդիան Արմենի ա» ՓԲԸ	ՀՀ Վայոց Ձորի մարզ,	ՇԱԹ-Վ- 29/245 26.09.12թ.	01.01.2036թ.	ՊՎ-245 26.09.12թ.	ԼՎ- 245 26.09.

		Ամուլսար ի ոսկեբեր քվարցիտն եր				12թ.
15	«Լիճքվա զ» ՓԲԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Լիճքվազ- Թեյի ոսկի	ՇԱԹՎ- 29/293 22.11.12թ.	08.12.2028թ.	ՊՎ-293 22.11.12թ.	ԼՎ- 293 22.11. 12թ.
16	«Թեղուտ » ՓԲԸ	ՀՀ Լոռու մարզ, Թեղուտի պղինձ- մոլիբդեն	ՇԱԹՎ - 29/376 20.02.13թ.	08.02.2026թ.	ՊՎ-376 20.02.13թ.	ԼՎ- 376ա 04.04. 13թ.
17	«Մարջա ն Մայնինգ Քոմփանի » ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Մարջանի ոսկի- բազմամե տաղ	ՇԱԹՎ- 29/398 05.03.13թ.	31.01.2023թ.	ՊՎ-398 07.03.13թ.	ԼՎ- 398 05.03. 13թ.
18	«Թաթսթ ռուն» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Այգեձորի պղինձ- մոլիբդեն /Թղկուտի տեղ./	ՇԱԹ -29/458 11.02.13թ.	11.02.2038թ.	Պ-458 11.02.13թ.	Լ-458 11.02. 13թ.
19	«Թաթսթ ռուն» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Լիճքի պղինձ	ՇԱԹ -29/459 11.02.13թ Փոփոխություն է կատարվել 10.02. 2016թ.	11.08.2028թ.	Պ-459 11.02.13թ.	Լ-459 11.02. 13թ.
20	«Ատ- մետալս» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Մեղրասա	ՇԱԹ-29/514 24.12.2014թ.	24.06.2022թ.	Պ-514 16.01.15թ.	Լ-514 24.12. 14թ.

		րի ոսկու հանքավայ ր				
21	«Բակտեկ Էկո» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ, Արջուտի ոսկու հանքավայ ր	ՇԱԹ-29/515 15.08.2014թ.	15.08.2040թ.	Պ-515 22.08.14թ.	Լ-515 15.08. 14թ.
22	«Գեղի Գօլդ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Ոսկեձորի ոսկի- բազմամե տաղային հանքավայ ր (ոսկի, արծաթ, ցինկ, պղինձ)	ՇԱԹ-29/544 22.07.2016թ.	22.12.2045թ.	Պ-544 22.07.2016թ .	Լ-544 22.07. 2016թ.
23	«Վարդա նի Զարթոնք ը» ՍՊԸ	ՀՀ Վայոց ձորի մարզի Սոֆի Բինայի ոսկի- բազմամե տաղայաի ն հանքավայ ր (ոսկի – բազմամե տաղ)	ՇԱԹ-29/239 27.09.2012թ.	03.12.2026թ.	ՊՎ -239 27.09.2012 թ.	ԼՎ -239 27.09.2012 թ.
24	«Վայք Գոլդ» ՍՊԸ	ՀՀ Վայոց ձորի մարզի Ագատեկի ոսկի- բազմամե	ՇԱԹ-29/371 23.11.2012թ.	23.11. 2037թ .	Պ-371 23.11.2012 թ.	Լ-371 23.11. 2012թ.

		տաղային հանքավայ ր (ոսկի- բազմամե տաղ)				
25	«Ակտիվ Լեռնագո րծ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Այգեձորի պղինձ- մոլիբդենա յին հանքավայ ր (պղինձ, մոլիբդեն)	ՇԱԹՎ - 29/425 28.12.2012թ.	24.10.2036թ.	ՊՎ-425 28.12.2012 թ.	ԼՎ-425 28.12.2012 թ.
26	«Ասսաթ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզի Քարաբեր դի ոսկու հանքավայ ր (ոսկի, արծաթ)	ՇԱԹ-29/366 06.06. 2013թ.	06.06. 2024թ .	Պ-366 06.06.2013 թ.	Լ-366 06.06. 2013թ .
27	«Հրաշք Մետաղ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Բարձրադ իրի (Մագրայի) ոսկու հանքավայ ր (ոսկի)	ՇԱԹ 29/542 15.06. 2016թ.	31 տարով	հրաժարվե լ է 2018 թվականի ն	
28	«Ղարազ ուլյան ներ» ՓԲԸ	ՀՀ Սյունիքի մարզի Վերին Վարդանի ձորի ոսկի- բազմամե	ՇԱԹ-29/547 25.10.2016թ.	25.10.2053թ.	Պ-547 25.10.2016թ.	Լ-547 25.10. 2016թ.

		տաղային հանքավայ րի Կենտրոն ական տեղամաս				
--	--	---	--	--	--	--

3.2 Վերոնշյալ կազմակերպություններից սույն ծրագրով ուսումնասիրվել են ընդերքօգտագործման թույլտվություն ունեցող, սակայն ընդերքօգտագործում չիրականացնող կամ մասամբ իրականացնող հետևյալ 19 կազմակերպությունների գործունեությունը և Գլաձորի Բազմամետաղային հանքավայրի շուրջ զարգացումները

1. Լիճքի պղնձի հանքավայր, գտնվում է Սյունիքի մարզի Մեղրի համայնքի տարածքում: Հանքի ընդերքօգտագործման իրավունքը տրվել է «Թաթսթոուն» ՍՊԸ-ին 2013 թվականից մինչև 2028 թվականը ժամկետով: 2018թ-ից հանքում աշխատանքները դադարեցվել են: Ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվել է 2021թ-ին:
2. Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի Կենտրոնական տեղամաս, գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի տարածքում: Ընդերքօգտագործման իրավունքը պատկանում է «Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ-ին 2012 թվականից մինչև 2036 թվականը ժամկետով: Հանքը չի շահագործվել:
3. Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի Թխկուտի տեղամաս, գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի տարածքում: Հանքի ընդերքօգտագործման իրավունքը տրված էր «Թաթսթոուն» ՍՊԸ-ին 2012 թվականից մինչև 2038 թվականը ժամկետով: Հանքը չի շահագործվել: Ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվել է 2020թ-ին:
4. Լիճքվազ-թեյի ոսկու հանքավայր, գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի տարածքում: Ընդերքօգտագործման իրավունքը պատկանում է «ԼԻՃՔՎԱԶ» ՓԲԸ-ին 2012 թվականից մինչև 2036 թվականը ժամկետով: Հանքն աշխատում է դադարներով:
5. Մեղրասարի ոսկու հանքավայր, գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի տարածքում: Ընդերքօգտագործման իրավունքը պատկանում է «Ատ-Մետալս» ՍՊԸ-ին 2014 թվականից մինչև 7,5 տարի ժամկետով: 2015թ-ին հանքի շահագործումը դադարեցվել է: Ընկերությունը բնապահպանական փորձաքննության է ներկայացրել «Տաշտունի փարձարարական ոսկու կորզման գործարանի վերազինման նախագիծ, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը»:
6. Վերին Վարդանիձորի ոսկի-բազմամետաղային հանքավայրի Կենտրոնական տեղամաս, գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի տարածքում: Ընդերքօգտագործման իրավունքը պատկանում է «Ղարագույաններ» ՓԲԸ-ին 2016 թվականից մինչև 37 տարի ժամկետով: Հանքը չի շահագործվել:
7. Հանքասարի պղինձ-մոլիբդենային հանքավայրի կենտրոնական տեղամաս, գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի տարածքում: Ընդերքօգտագործման

- իրավունքը պատկանում է «Լեռ-էքս» ՍՊԸ-ին 2012 թվականից մինչև 2032 թվականը ժամկետով: 2014թ-ից հանքը չի շահագործվում:
8. Ոսկեձորի ոսկի-բազմամետաղային հանքավայր, գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի տարածքում: Ընդերքօգտագործման իրավունքը պատկանում է «ԳԵՂԻ ԳՕԼԴ» ՍՊԸ-ին 2016 թվականից մինչև 29.4 տարի ժամկետով: Հանքը չի շահագործվել:
 9. Մարջանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի կենտրոնական տեղամաս և թևեր, գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Միսիան համայնքի տարածքում: Ընդերքօգտագործման իրավունքը պատկանել է «Մարջան Մայնինգ Քոմփանի» ՍՊԸ-ին 2013 թվականից մինչև 2033 թվականը ժամկետով: Հանքը չի շահագործվել: Ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվել է 2019թ-ին, բողոքարկվել է:
 10. Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայր, գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Միսիան համայնքի տարածքում: Ընդերքօգտագործման իրավունքը պատկանում էր «Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ-ին 2012 թվականից մինչև 9,2 տարի ժամկետով: Հանքը չի շահագործվել: Ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվել է 2020թ-ին: Բողոքարկվել է:
 11. Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի «Տիգրանես», «Արտավազդես» և «Էրատո» տեղամասեր, գտնվում է ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերի սահմանագծին: Ընդերքօգտագործման իրավունքը պատկանում է «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին 2012 թվականից մինչև 2036 թվականը ժամկետով: Հանքի շինարարության աշխատանքները դադարեցվել են 2018 թվականին տեղի բնակչության կողմից դեպի հանքի ենթակառուցվածքներ տանող ճանապարհների փակման արդյունքում:
 12. Ագատեկի ոսկի-բազմամետաղային հանքավայր, գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի տարածքում: Ընդերքօգտագործման իրավունքը «Վայք Գոլդ» ՍՊԸ-ին էր պատկանում 2012-2037թթ. ժամկետով: Ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվել է 2019 թվականին:
 13. Սոֆի-Բինայի ոսկի-բազմամետաղային հանքավայր, գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթաի համայնքի տարածքում: Ընդերքօգտագործման իրավունքը պատկանում էր «Վարդանի զարթոնքը» ՍՊԸ-ին 2012 թվականից մինչև 2026 թվականը ժամկետով: Հանքը չի շահագործվել: Ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվել է 2020թ-ին: Բողոքարկվել է:
 14. Մղարթի ոսկու հանքավայրի թիվ 8 և 5 հանքային մարմիններ, գտնվում է Լոռու մարզի Օձուն համայնքի տարածքում: Հանքի ընդերքօգտագործման իրավունքը տրված է «Մուլտի գրուպ կոնցեռն» ՍՊԸ-ին 2012 թվականից մինչև 2031թվականը ժամկետով: Մի քանի տարի է՝ հանքը չի շահագործվում:
 15. Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայր, գտնվում է ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի տարածքում: Հանքի ընդերքօգտագործման իրավունքը տրված է «Սագամար» ՓԲԸ-ին 2012 թվականից մինչև 2049 թվականը ժամկետով: Հանքը չի շահագործվում 2015թ-ից:
 16. Քարաբերդի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամաս, գտնվում է ՀՀ Լոռու մարզի Քարաբերդ համայնքի տարածքում: Ընդերքօգտագործման իրավունքը պատկանում է

«Ասսաթ» ՍՊԸ-ին 2013 թվականից մինչև 2024 թվականը ժամկետով: Հանքն աշխատում է դադարներով:

17. Արջուտի ոսկու հանքավայր, գտնվում է ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքի տարածքում: Ընդերքօգտագործման իրավունքը պատկանում է «ԲԱԿՏԵԿ ԷԿՈ» ՍՊԸ-ին 2014 թվականից մինչև 26 տարի ժամկետով: Հանքը չի շահագործվել:
18. Թուխմանուկի ոսկու հանքավայրի կենտրոնական տեղամաս, գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Մելիքյուղ համայնքի տարածքում: Ընդերքօգտագործման իրավունքը տրված էր «Մեգո Գոլդ» ՍՊԸ-ին 2012 թվականից մինչև 2040 թվականը ժամկետով: Ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվել է 2019թ-ին:
19. Մեղրաձորի ոսկու հանքավայրի Լուսաջուրի տեղամաս, գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի տարածքում: Ընդերքօգտագործման իրավունքը պատկանում էր «Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ-ին 2012 թվականից մինչև 2035 թվականը ժամկետով: Հանքը չի շահագործվել: Ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվել է 2020թ-ին: Բողոքարկվել է:
20. Հրազդանի երկաթի հանքավայր, գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի տարածքում: Ընդերքօգտագործման իրավունքը պատկանում էր «Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ-ին 2012 թվականից մինչև 2032 թվականը ժամկետով: Հանքը չի շահագործվել: Ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվել է 2020թ-ին: Բողոքարկվել է:

4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐԵՐԸ

Յուրաքանչյուր հանքավայրի և այն շահագործող կազմակերպության վերաբերյալ առանձին կազմվել է մանրամասն հաշվետվություն, որը հրապարակվել է <https://www.ecolur.org/> կայքի «Անկախ փորձագիտական գնահատականներ» էջում¹ և հանրայնացվել: Հաշվետվությունները ներկայացվել են ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամներին նրանց դիրքորոշումը ստանալու նպատակով:

Հանքերի չաշխատելու վերաբերյալ հարցումներ են ուղարկվել ընդերքօգտագործման թույլտվություն ունեցող ընկերություններին, ՏԿԵՆ-ին: Նամակ է ուղարկվել ՇՄՆ-ին: Նամակները հրապարակվել են <https://www.ecolur.org/> կայքում:

4.1 Հաշվետվություններն ունեցել են հետևյալ կառուցվածքը.

1. Շահագործման ներկա վիճակը, ընդհանուր տվյալներ հանքի վերաբերյալ՝ գտնվելու վայրը, ինչ մետաղի հանքավայր է, պաշարների ծավալը, ընդերքօգտագործման թույլտվության համարը, ընդերքօգտագործման պայմանագրի համարը, պայմանագրով տրված տարեկան արդյունահանման ծավալները, շահագործման ժամկետը, երբվանից չի աշխատում, ՇՄԱԳ փորձաքննության պայմանները, ազդակիր համայնքի և դրա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների նկարագրությունը, ազդակիր համայնքի

¹ <https://www.ecolur.org/hy/independent-experts/>

զարգացման ծրագրում ընկերությունների ներգրավվածության մասին, հանքավայրը շահագործող ընկերության իրական սեփականատերերի մասին տվյալներ:

2. Ընդերքօգտագործման պայմանագրով ստանձնած սոցիալական և բնապահպանական պարտավորությունները և դրանց կատարողականը, հանքի փակման ծրագրերը և ընկերությունների տված ֆինանսական երաշխիքները: Ընկերությունների՝ 2016-2018թթ. ԱՃԹՆ հաշվետվություններից հարկերի, տուրքերի, ռոյալթիների, բնապահպանական վճարների նպատակային օգտագործման, մասհանումների և ծրագրերի, շրջակա միջավայրի դրամագլխի վճարների վերաբերյալ տվյալները
3. Ընդերքօգտագործման պայմանագրով ստանձնած սոցիալական պարտավորությունների փաստացի կատարողականն այդ տարիներին՝ ըստ տվյալ ընկերության և ՏԿԵՆ-ի ԱՃԹՆ հաշվետվությունների:
4. Տվյալ հանքավայրի ազդակիր համայնք/ներ կատարած այցելությունների արդյունքում հարցումների վերլուծությունը:
5. Եզրակացություն, որը հիմնված է.
 - շրջակա միջավայրի վրա ազդեցության ակնադիտական և բնակչության շրջանում, այդ թվում ազդակիր համայնքների ղեկավարների հետ անցկացրած հարցումների /սոցիալական վիճակի վրա հանքի գործունեության դադարեցման ազդեցության/, ընդերքօգտագործման պայմանագրերի և իրավունքի փաստաթղթերի իրավական վերլուծության /հանքերի չաշխատելու դեպքում օրենսդրությամբ սահմանվող պատասխանատվության միջոցները և հարցի կարգավորմանը միտված օրենսդրական բացերը, հանքի չաշխատելու դեպքում ստանձնած պարտականությունների չկատարման հետևանքները, չաշխատելու արդյունքում պետության առաջ ստանձնած պարտավորությունների չկատարման հետևանքները, ազդեցությունը պետական բյուջեի վրա/, ԱՃԹՆ գործընթացների վերաբերյալ ազդակիր բնակչության իրազեկվածության վերաբերյալ:

4.2 ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐԵՐԸ

4.2.1. «ՍԱԳԱՄԱՐ» ՓԲԸ-Ի (ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՆԻՍԻ ՈՍԿԻ-ԲԱԶՄԱՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



Նկար 3. Արմանիսի ոսկի բազմամետաղային հանքավայր

1. Շահագործման թույլտվություն ստանալուց հետո Ընկերությունն արդյունահանման աշխատանքները մի քանի տարի դադարեցրել է՝ չապահովելով ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը:
2. Ընդերքօգտագործման պայմանագիր կնքելիս՝ ազդակիր համայնքը չի ներգրավվել Ընկերության սոցիալական պատասխանատվության հարցերի քննարկման գործընթացին և չի արտահայտել իր դիրքորոշումը պայմանագրի կնքման ժամանակ:
3. Չնայած նրան, որ, ըստ 06.06.2013թ. ՊՎ-366 ընդերքօգտագործման պայմանագրի, Ընկերությունն ազդակիր Ստեփանավան համայնքի նկատմամբ ունի ստանձնած որոշակի սոցիալական պարտավորություններ, չի կատարել իր պայմանագրային պարտավորությունները:
4. «Սագամար» ՓԲԸ-ն չի կատարել պետական բյուջեի նկատմամբ ունեցած իր պարտավորությունները:
5. Չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
6. Մի քանի տարի շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացումներ չի կատարել:
7. Մի քանի տարի չի վճարել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարը:
8. Ընկերությունը վերջին տարիներին հանքը չշահագործելը հիմնավորել է ինչպես ընդերքշահագործման թույլտվության մեջ հանքավայրի հաստատված պաշարների ոչ հավաստի տվյալներով, այնպես էլ համաշխարհային շուկայում մինչև 2018թ. մետաղների միջազգային գների անկմամբ:
9. «Սագամար» ՓԲԸ-ի ընդերքօգտագործման պայմանագիրը երկարացվել է մինչև 2049թ., սակայն պայմանագրի ժամկետները փոփոխելիս, հանքի փակման ֆինանսական վերահաշվարկ չի իրականացվել:
10. «Սագամար» ՓԲԸ-ի ներկայացրած ԱՃԹՆ հաշվետվությունների և պետական մարմինների ներկայացրած տվյալների մեջ կան որոշակի տարբերություններ:²

4.2.2. «ՄՈՒԼՏԻ ԳՐՈՒՊ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-Ի (ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄՂԱՐԹԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԹԻՎ 5 և ԹԻՎ 8 ՀԱՆՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

² <https://www.ecolor.org/files/uploads/sagamarreportfinal.pdf>



Նկար 4. Մղարթի ոսկու հանքավայր

1. Շահագործման թույլտվություն ստանալուց հետո Ընկերությունն արդյունահանման աշխատանքները մի քանի տարի դադարեցրել է՝ չապահովելով ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը:
2. Ընկերության կողմից ներկայացված ԱՃԹՆ հաշվետվությունը ներկայացված է ամբողջ Ընկերության գործունեության վերաբերյալ, առանձնացված չէ Մղարթ հանքավայրի շահագործման վերաբերյալ տեղեկատվությունը:
3. Ընդերքօգտագործման պայմանագիր կնքելիս՝ ազդակիր համայնքը չի ներգրավվել Ընկերության սոցիալական պատասխանատվության հարցերի քննարկման գործընթացին և չի արտահայտել իր դիրքորոշումը պայմանագրի կնքման ժամանակ:
4. Ընդերքօգտագործման պայմանագրով Ընկերությունը Մղարթի սոցիալ-տնտեսական զարգացման գործում պարտավորություններ չի ստանձնել, սակայն, ըստ Ընկերության տնօրինության, նախատեսվում են պայմանագրային փոփոխություններ, որոնցում կներառվի սոցիալական աջակցության բաղադրիչը:
5. Ընդերքօգտագործման պայմանագրով հանքի փակման և դրանով նախատեսված ֆինանսական պարտավորություններ ամրագրված չեն:
6. Ընկերությունը չի կատարել պետական բյուջեի նկատմամբ ունեցած իր պարտավորությունները:
7. Չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
8. Մի քանի տարի շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացումներ չի կատարել, որը Ընկերությունը բացատրել է մեծ գումարի չափով կանխավճար կատարած լինելու հանգամանքով:
9. Չի կատարել մշտադիտարկումների համար և բնապահպանական և բնօգտագործման հարկային պարտավորությունները:
10. Ընկերությունը հանքի չշահագործելը հիմնավորել է նրանով, որ կատարված երկրաբանահետախուզական հետազոտություններով կատարվել են հանքավայրի պաշարների վերագնահատումներ, դրա հիման վրա կազմվել է հանքավայրի արդյունաբերական շահագործման նախագիծ, որը 2018 թվականից գտնվում է փորձաքննական փուլում:

11. Մղարթ համայնքն իր հնգամյա զարգացման ծրագրում հաշվի չի առել ոսկու հանքի շահագործման ոչ դրական, ոչ բացասական ազդեցությունը համայնքի սոցիալ-տնտեսական, էկոլոգիական վիճակի վրա:
12. Ընկերությունն ազդակիր համայնքների բնակիչների հետ չի աշխատում թափանցիկ, չի անցկացնում հանդիպումներ՝ բնակիչներին իրազեկելու իր ծրագրերի մասին, անորոշության մեջ պահելով նրանց:
13. Ընդերքօգտագործման պայմանագիրը կնքվել է օրենսդրական պահանջների խախտմամբ. այնտեղ ներառված չեն հանքի փակման և դրա համար նախատեսված պարտավորությունները: Ավելին, չնայած նրան, որ «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը վերակնքվել է 2012թ. հոկտեմբերի 20-ին, այն պետք է ներառեր այդ ժամանակ օրենսդրությամբ պահանջվող բոլոր պարտավորությունները: Նախկին պայմանագրերի վերակնքման արդյունքում պետք է սահմանված լինեին նոր օրենսդրության պահանջները՝ այդ թվում հանքի փակման, բնապահպանական կառավարման պլանի և սոցիալական պարտավորությունների, ինչպես նաև ընդերքօգտագործման պայմանագրի հավելվածներով սահմանվող բոլոր մյուս պարտավորությունների մասով:³

4.2.3. «ԲԱԿՏԵԿ ԷԿՈ» ՍՊԸ-Ի (ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ



Նկար 5. ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնք

1. Շահագործման թույլտվություն ստանալուց հետո Ընկերությունն արդյունահանման աշխատանքներն առ այսօր չի սկսել՝ չապահովելով ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը:
2. Քանի որ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եզրակացությունները ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում Ընկերությունը չի շահագործվել հանքը և չի կառուցել հարստացուցիչ ֆաբրիկան, դրանց շահագործման ՇՄԱԳ եզրակացությունները ուժի մեջ չեն օրենքով:
3. Չի ապահովվել հանքի շահագործման, ինչպես նաև ոսկու կորզման ֆաբրիկայի կառուցման թույլտվությունների ստացման նախապայմաններից մեկը՝ նոր

³ <https://www.ecolur.org/files/uploads/mghartreportfinal.pdf>

աշխատատեղերի ստեղծման մեջ Արջուտ համայնքի բնակիչների ներգրավման մոտիվացիան:

4. Ընկերությունն իր անգործության հետևանքով բացասական ազդեցություն է թողել ՀՀ պետական և համայնքային բյուջեի կանխատեսումների գործընթացի վրա՝ բնապահպանական և առողջապահական պահանջվող մշտադիտարկումների իրականացման վճարներ չի մուծել, բնապահպանական վճարներ չի հաշվարկել և չի մուծել, մինչև 2018 թվականը գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրքը չի վճարել, սահմանված կարգով չի փոխել հողի գործառնական նշանակությունը, հողի հարկ չի մուծել:
5. Ընդերքօգտագործման պայմանագիր կնքելիս՝ համայնքը չի ներգրավվել Ընկերության սոցիալական պատասխանատվության հարցերի քննարկման գործընթացին և չի արտահայտել իր դիրքորոշումը պայմանագրի կնքման ժամանակ:
6. Չի կատարել իր 22.08.2014թ. Պ-515 ընդերքօգտագործման պայմանագրով ազդակիր Արջուտ համայնքի նկատմամբ ստանձնած՝ սոցիալական պարտավորությունները, չի կատարել իր պայմանագրային պարտավորությունները:
7. Չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
8. Չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը:
9. Կան համակարգային խնդիրներ հանքի փակման ծրագրի կատարողականը գնահատելու հարցում, քանի որ հնարավոր չէ այն գնահատել նախքան հանքի փակման փաստացի գործընթացների իրականացումը, որն սկսվում է հանքի փաստացի փակումից ընդամենը 2 տարի առաջ:
10. Հանքի փակման համար ներկայացված ծախսերն իրական չեն, քանի որ խիստ վաղաժամ են՝ հաշվի առնելով, որ Արջուտի հանքի փակումը նախատեսվել է իրականացնել 2040 թվականին:
11. Հանքի փակման ֆինանսական երաշխիքներն իրատեսական չեն, դրանք ընդամենը Ընկերության ներկայացրած և ընդերքօգտագործման պայմանագրով ամրագրված պարտավորություններ են, որոնք ապահովված չեն Ընկերության ֆինանսական դրությունից դուրս գտնվող լրացուցիչ երաշխիքներով և կարող են փոշիանալ Ընկերության սնանկացմամբ:
12. ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության 2020 թվականի մարտի 11-ի գրության համաձայն՝ «Բակտեկ Էկո» ՍՊԸ-ն օրենքով սահմանված կարգով իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրեր չի ներկայացրել, խախտվել է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջը: Այդ

հայտարարագիրը ներկայացվել է 2021 թվականին՝ հաշվետվությունը www.ecolur.org կայքում՝ հրապարակվելուց հետո:⁴

4.4.4. «ՄՈԼԻԲԴԵՆԻ ԱՇԽԱՐՀ» ՄՊԸ-ի (ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՍՏԱԿԵՐՏԻ ՊՂԻՆԶ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



Նկար 6. ՀՀ Սյունիքի մարզի Դաստակերտ բնակավայր

1. Ընկերությունն ընդերքօգտագործման թույլտվություն 15.03.2021թ. դրությամբ չունի, այն դադարեցվել է ՀՀ ՏԿԵ նախարարի 28.07.2020թ. 1008-Ա հրամանով:
2. Շահագործման թույլտվություն ստանալուց հետո Ընկերությունն արդյունահանման աշխատանքներն առ 2020թ. հուլիս ամիսը չի սկսել՝ չապահովելով ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը:
3. Ընդերքօգտագործման պայմանագիր կնքելիս՝ համայնքը չի ներգրավվել Ընկերության սոցիալական պատասխանատվության հարցերի քննարկման գործընթացին և չի արտահայտել իր դիրքորոշումը պայմանագրի կնքման ժամանակ:
4. Չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
5. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի հետ հողօգտագործման պայմանագիր կնքելուն ուղղված անհրաժեշտ և բավարար գործողություններ Ընկերության կողմից ողջամիտ ժամկետում չեն ձեռնարկվել, ինչի հետևանքով չի ունեցել հողօգտագործման պայմանագիր:
6. Ընկերությունը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը:
7. Ազդակիր համայնքի կարգավիճակը կորցնելով՝ Դաստակերտ համայնքը բավարար չափով չի օգտվել Ընկերության կողմից սոցիալական աջակցության միջոցներից:

⁴ <https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/arjutreportnew.pdf>

8. Այս Ընկերության համար օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար վճար ՀՀ բնապահպանության նախարարության կողմից չի սահմանվել:
9. Առ 2018թ-ը չի հաշվարկել և չի վճարել բնապահպանական միջոցառումների իրականացման համար պահանջվող բնապահպանական հարկերը:
10. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումով ներկայացվող՝ հանքի փակման ծրագիրը չի ներառել խախտված հողերի ռեկուլտիվացիայի, ենթակառուցվածքների ապամոնտաժման, աշխատուժի սոցիալական մեղմացման, մշտադիտարկումների իրականացման, հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքների վերաբերյալ դրույթներ:⁵

4.4.5 «ՄԱՐԶԱՆ ՄԱՅՆԻՆԳ ՔՈՍՓԱՆԻ» ՍՊԸ-ի (ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶԱՆԻ ՈՍԿԻ-ԲԱԶՄԱՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ



Նկար 7. Հանդիպում ՀՀ Սյունիքի մարզի ազդակիր Միսիան համայնքի փոխհամայնքապետի հետ

1. Ընկերությունն ընդերքօգտագործման թույլտվություն 15.03.2021թ. դրությամբ չունի, այն դադարեցվել է ՏԿԵ նախարարի 29.07.2020թ. թիվ 1078-Ա հրամանով:
2. Շահագործման թույլտվություն ստանալուց հետո Ընկերությունն արդյունահանման աշխատանքներ չի իրականացրել՝ չապահովելով ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը:
3. Իր անգործության հետևանքով բացասական ազդեցություն է թողել ՀՀ պետական բյուջեի կանխատեսումների գործընթացի վրա. Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում չի կատարել, բնապահպանական և առողջապահական պահանջվող մշտադիտարկումների իրականացման վճարներ չի մուծել,

⁵ <https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/dastakertreportfinalcopy2.pdf>

բնապահպանական հարկեր չի հաշվարկել և չի մուծել, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրք չի մուծել, հողի հարկ չի մուծել:

4. Ընդերքօգտագործման պայմանագիր կնքելիս՝ համայնքը չի ներգրավվել Ընկերության սոցիալական պատասխանատվության հարցերի քննարկման գործընթացին և չի արտահայտել իր դիրքորոշումը պայմանագրի կնքման ժամանակ:
5. ՊՎ/398 ընդերքօգտագործման պայմանագիրը չունի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ դրույթներ:
6. Ընկերությունը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
7. Չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը:
8. Այս Ընկերության համար օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար վճար ՀՀ բնապահպանության նախարարության կողմից չի սահմանվել:
9. Ընդերքօգտագործման պայմանագրում չի ամրագրվել հանքի փակման միջոցառումների և հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքների մասին բաժինը:⁶

4. 4. 6. «ՖՈՐՇՆ ՌԻԶՈՐՄԻՍ» ՍՊԸ, ՀՐԱԶԴԱՆԻ ԵՐԿԱԹԻ ՀԱՆՔԱՎԱՅՐ



Նկար 8. Հանդիպում ՀՀ Կոտայքի մարզի ազդակիր Հրազդան համայնքի համայնքապետարանում

⁶ <https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/marjanreportfinal.pdf>

1. Ընկերությունն ընդերքօգտագործման թույլտվություն 15.03.2021թ. դրությամբ չունի, այն դադարեցվել է ՀՀ ՏԿԵ նախարարի 31.07.2020թ. N 1033-Ա հրամանով:
2. Շահագործման թույլտվություն ստանալուց հետո Ընկերությունն արդյունահանման աշխատանքները մինչև 2020 թվականի ավարտը չի սկսել՝ չապահովելով ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը:
3. Իր անգործության հետևանքով բացասական ազդեցություն է թողել ՀՀ պետական և համայնքային բյուջեի կանխատեսումների գործընթացի վրա: Ընկերությունը բնապահպանական և բնօգտագործման հարկեր չի հաշվարկել և չի մուծել, հողի հարկ չի մուծել:
4. Ընդերքօգտագործման պայմանագիր կնքելիս՝ համայնքը չի ներգրավվել Ընկերության սոցիալական պատասխանատվության հարցերի քննարկման գործընթացին և չի արտահայտել իր դիրքորոշումը պայմանագրի կնքման ժամանակ:
5. 20.11.2012թ. ՊՎ 169 ընդերքօգտագործման պայմանագրում բացակայում են համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ դրույթներ:
6. Ընկերությունը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
7. Ընկերությունը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը, քանի որ
8. Այս Ընկերության համար օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար վճար ՀՀ բնապահպանության նախարարության կողմից չի սահմանվել:
9. Ընկերությունն իր գործունեության ընթացքում չի ապահովել աշխատանքների և իրագործվող ծրագրի թափանցիկությունն ազդակիր համայնքի և շահագրգիռ հասարակայնության նկատմամբ:
10. Ընկերությունը չաշխատելու հետևանքով չի ապահովել առնվազն 5 հարյուր նոր, իսկ ծրագրված ամբողջ հզորությամբ աշխատելու դեպքում՝ մինչև 3 հազար մարդու աշխատատեղեր ստեղծելու իր ծրագրային խոստումը:
11. Հանքի շահագործման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական 13.10.2008թ. ԲՓ-118 դրական եզրակացությունը կորցրել է իր ուժը:
12. Չի փոխվել հատկացված հողերի գործառնական նշանակությունը:
13. Տեղի բնակչությունը կտրականապես դեմ է հանքի շահագործմանը:⁷

⁷ <https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/fortuneresoursisfinal.pdf>

4.4.7. «ՊԱՐԱՄԱՌԻՆՏ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՓԲԸ, ՄԵՂՐԱՁՈՐԻ ՈՍԿԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԼՈՒՍԱԶՈՒՐԻ ՏԵՂԱՄԱՍ



Նկար 9. Հանդիպում ՀՀ Կոտայքի մարզի ազդակիր Մեղրաձոր համայնքի համայնքապետի հետ

1. Ընկերությունն ընդերքօգտագործման թույլտվություն 15.03.2021թ. դրությամբ չունի, այն դադարեցված է ՏԿԵ նախարարի 07.08.2020 թվականի թիվ 1074-Ա հրամանով:
2. Շահագործման թույլտվություն ստանալուց հետո Ընկերությունն արդյունահանման աշխատանքներն առ 2020 թվականի ավարտը չի սկսել՝ չապահովելով ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը:
3. Ընկերության անգործությունը բացասական ազդեցություն է թողել ՀՀ պետական և համայնքային բյուջեի կանխատեսումների գործընթացի վրա: Ընկերությունը բնապահպանական և բնօգտագործման հարկեր չի հաշվարկել և չի մուծել, հողի հարկ չի մուծել:
4. Ընդերքօգտագործման պայմանագիր կնքելիս համայնքը չի ներգրավվել Ընկերության սոցիալական պատասխանատվության հարցերի քննարկման գործընթացին և չի արտահայտել իր դիրքորոշումը պայմանագրի կնքման ժամանակ:
5. Ընկերությունը ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի հետ չի կնքել հողի օգտագործման պայմանագիր և չունի հողի օգտագործման իրավունք:
6. 12.06.2012թ. ՊՎ-089 ընդերքօգտագործման պայմանագիրը չունի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ դրույթներ:
7. Ընկերությունը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
8. Ընկերությունը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը:
9. Այս Ընկերության համար օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և

դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար վճար ՀՀ բնապահպանության նախարարության կողմից չի սահմանվել:

10. Ընկերությունն իր գործունեության ընթացքում չի ապահովել աշխատանքների և իրագործվող ծրագրի թափանցիկությունն ազդակիր համայնքի և շահագրգիռ հասարակայնության նկատմամբ:

11. Ընկերության և պետական մարմինների ԱՃԹՆ հաշվետվությունների մեջ կան էական տարբերություններ:⁸

4.4.8. «ՄԵԳՈ ԳՈԼԴ» ՍՊԸ, ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹՈՒՆՄԱՆՈՒԿԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ



Նկար 10. «Մեգո Գոլդ» ՍՊԸ-ի գործարանի տարածք

1. Ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվել է ՀՀ ՏԿԵ նախարարի 13.12.2019թ. 693-Ա հրամանով, սակայն Ընկերությունը հրամանը 15.03.2021թ. դրությամբ բողոքարկել է:
2. 2016 թվականից «Մեգո Գոլդ» ՍՊԸ-ն համայնքի 226 հա մակերեսով տարածքի վարձակալության դիմաց սահմանված տարեկան գումարային 45,0 մլն. դրամ վարձավճարը չի վճարել:
3. Շահագործման թույլտվություն ստանալուց հետո երկար տարիներ Ընկերությունն արդյունահանման աշխատանքներ չի կատարել՝ չապահովելով ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը:
4. Իր անգործության հետևանքով բացասական ազդեցություն է թողել ՀՀ պետական և համայնքային բյուջեների կանխատեսումների գործընթացի վրա: Ընկերությունը բնապահպանական և բնօգտագործման հարկեր չի հաշվարկել և չի մուծել, հողի հարկ չի մուծել:
5. Ընդերքօգտագործման պայմանագիր կնքելիս՝ համայնքը չի ներգրավվել Ընկերության սոցիալական պատասխանատվության հարցերի քննարկման գործընթացին և չի արտահայտել իր դիրքորոշումը պայմանագրի կնքման ժամանակ:

⁸ <https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/paramauntgoldfinal.pdf>

6. 28.12.2012թ. ՊՎ-184 ընդերքօգտագործման պայմանագիրը չունի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ դրույթներ: Պայմանագրում չի ամրագրվել հանքի փակման միջոցառումների և հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքների մասին բաժինը: Ընդերքօգտագործման հայտի քննարկման գործընթացում չի պահանջվել հանքի փակման ծրագիրը:
7. Ընկերությունը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
8. Ընկերությունը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը:
9. Ընկերության համար օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար վճար ՀՀ բնապահպանության նախարարության կողմից չի սահմանվել:
10. Ընկերությունն իր գործունեության ընթացքում չի ապահովել աշխատանքների և իրագործվող ծրագրի թափանցիկությունն ազդակիր համայնքի և շահագրգիռ հասարակայնության առաջ:
11. Ընկերության և պետական մարմինների ԱՃԹՆ հաշվետվությունների մեջ կան էական տարբերություններ:⁹

4.4.9. «ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԲԵՐՂԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ



Նկար 11. ՀՀ Լոռու մարզի ազդակիր Քարաբերդ համայնք

⁹ <https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/megogoldreportfinal.pdf>

1. ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 05.10.2016թ. վճռով «ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ: 2019թ-ին Ընկերությունը ճանաչվել է ֆինանսապես առողջացած:
2. Ընդերքօգտագործման պայմանագիր կնքելիս՝ ազդակիր համայնքը չի ներգրավվել Ընկերության սոցիալական պատասխանատվության հարցերի քննարկման գործընթացին և չի արտահայտել իր դիրքորոշումը պայմանագրի կնքման ժամանակ: Համայնքն իրազեկված չէ այդ պայմանագրի մասին և չգիտի իր իրավունքների մասին:
3. 06.06.2013թ. ՊՎ-366 ընդերքօգտագործման պայմանագրով ազդակիր Քարաբերդ համայնքի նկատմամբ ստանձնած որոշակի սոցիալական պարտավորություններն ամբողջ ծավալով չեն կատարվել տարիներ շարունակ:
4. 06.06.2013թ. ՊՎ-366 ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված համայնքի դպրոցի և մանկապարտեզի կարիքների համար ֆինանսական օգնություն տրամադրելու վերաբերյալ կետը չի համապատասխանում համայնքի կարիքներին, քանի որ նման հաստատություններ համայնքում բացակայում են:
5. Շահագործման թույլտվություն ստանալուց ի վեր Ընկերությունն աշխատել է կարճ ժամանակահատված՝ մինչև 2014 թվականը, որից հետո դադարեցրել է գործունեությունը՝ չապահովելով ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը:
6. Քարաբերդի ոսկու հանքի կենտրոնական տեղամասի շահագործման համար 2012թ-ին տրված բնապահպանական փորձաքննության եզրակացությունն ուժը կորցրել է, քանի որ Ընկերությունը հանքը չի շահագործել:
7. Չի ապահովվել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
8. Շահագործման թույլտվություն ստանալուց ի վեր՝ մինչև 2018թ-ը Ընկերությունը շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացումներ չի կատարել:
9. Շահագործման թույլտվություն ստանալուց ի վեր մինչև 2019 թվականը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը:
10. Համակարգային խնդիրների պատճառով հանքի փակման ծրագրի կատարողականը գնահատել հնարավոր չէ, քանի որ այդ գործընթացը պետք է սկսի հանքի փաստացի փակումից ընդամենը 2 տարի առաջ:
11. Հանքի փակման համար ներկայացված ծախսերն այս հանքավայրի համար կարող են որոշակիանալ միայն 2024 թվականին, քանի որ հանքավայրի փակումը նախատեսվում է իրականացնել այդ թվականին եթե մինչ այդ չկատարվեն պայմանագրային փոփոխություններ և չերկարաձգվի շահագործման ժամկետը:
12. Հանքի փակման ֆինանսական երաշխիքներն իրատեսական չեն, դրանք ընդամենը Ընկերության ներկայացրած և ընդերքօգտագործման պայմանագրով ամրագրված պարտավորություններ են, որոնք ապահովված չեն Ընկերության ֆինանսական դրությունից դուրս գտնվող լրացուցիչ երաշխիքներով և կարող են փոշիանալ Ընկերության սնանկացմամբ:

13. Քարաբերդի 2017-2021թթ զարգացման հնգամյա ծրագրում համայնքի տարածքում «ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ի գործունեության բաղադրիչը ներառված չէ:¹⁰

4.4.10. «ԱԿՏԻՎ ԼԵՌՆԱԳՈՐԾ» ՍՊԸ, ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԶՈՐԻ ՊՂԻՆԶ-ՍՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ



Նկար 12. ՀՀ Սյունիքի մարզի Այգեձոր բնակավայրի տարածք

1. ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018 նոյեմբերի 9-ի թիվ 147-Ա հրամանով «Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ-ի թույլ տված խախտումների հիմքով ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման վերաբերյալ Ընկերության նկատմամբ հարուցվել էր վարչական վարույթ, ինչը 2018թ-ի դեկտեմբերի 28-ի 191-Ա հրամանով կարճվել է, քանի որ Ընկերության կողմից վերացվել են վարչական վարույթի համար հիմք հանդիսացած խախտումները:
2. Շահագործման թույլտվություն ստանալուց ի վեր «Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ-ն արդյունահանման աշխատանքներ մինչ 2021թ. հունվար ամիսը չի իրականացրել, չի ապահովել ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը:
3. Չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների և ընդերքօգտագործման պայմանագրի կետերի կատարումը:
4. Չի փոխվել հողերի գործառնական նշանակությունը:
5. 28.12.12թ. ՊՎ-425 ընդերքօգտագործման պայմանագիրը չի ներառել ազդակիր համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունները և հանքի փակման ծրագիրը:
6. Ազդակիր բնակավայրերի բնակիչներն իրազեկված չեն սոցիալական ծախսերի մասով Ընկերության ստանձնած պարտավորությունների, բնակավայրերի և համայնքի միջև չկա համագործակցություն, ապահովված չէ Ընկերության կատարած աշխատանքների թափանցիկությունը:
7. Ընդերքօգտագործող ընկերությունն իր օգտագործած շարժական մեքենաների և տեխնիկայի համար սահմանվող գույքահարկի դիմաց վճարումներ չի կատարել:
8. Ընկերությունն իր Ընդերքօգտագործման պայմանագրով պարտավորությունները չի կատարել, մասնավորապես, չի վճարել բնապահպանական վճարներ:

¹⁰ <https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/Qaraberdreportfinalnew1.pdf>

9. Չի արդարացվել հանքարդյունահանման ծրագրում որպես ազդակիր բնակչությանը շահագրգռող գործոն օգտագործված զգալի աշխատատեղերի բացման հեռանկարը:
10. Ընկերության ընդերքօգտագործման պայմանագրում օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարում չի կատարել:
11. Ցածր է ազդակիր համայնքի և բնակավայրերի բնակիչների իրազեկվածությունը ԱՃԹՆ գործընթացների մասին:
12. Ընկերության ԱՃԹՆ հաշվետվությունները համադրելի չեն պետական մարմինների հաշվետվությունների հետ:
13. Ընկերությունը մակաբացման աշխատանքներ է իրականացրել առանց հողի գործառնական նշանակության փոփոխության:¹¹

4.4.11. «ԱՏ-ՄԵՏԱԼՍ» ՍՊԸ-Ը, ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՍԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐ



Նկար 13. Տաշտունի փարձարարական ոսկու կորզման գործարան

1. Ընկերությունը սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ՊՎ-514 (16.01.2015թ.) պայմանագրով ստանձնած տարեկան 3,6 մլն. դրամի մասնակցության պարտավորությունն ազդակիր համայնքի նկատմամբ չի կատարել:
2. Բացառությամբ 2017 թվականի, շահագործման թույլտվություն ստանալուց ի վեր, Ընկերությունն արդյունահանման աշխատանքներ մինչ օրս չի իրականացրել՝ չապահովվելով ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը:
3. Չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
4. Չի ապահովել ընդերքօգտագործման պայմանագրով ստանձնած բնապահպանական պարտավորությունների կատարումը:

¹¹ <https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/aktivlernagortsfinal.pdf>

5. Ազդակիր բնակավայրերի բնակիչներն իրազեկված չեն սոցիալական ծախսերի մասով Ընկերության ստանձնած պարտավորությունների մասին, բացակայում է Ընկերություն-ազդակիր համայնք համագործակցությունը, և չի ապահովվում ընդերքօգտագործող Ընկերության աշխատանքների թափանցիկությունը:
6. Ընկերությունն իր օգտագործած շարժական մեքենաների և տեխնիկայի համար սահմանվող գույքահարկը չի վճարել դրանց բնապահպանական և առողջապահական բացասական հետևանքները կրող համայնքային բյուջե:
7. Ընկերությունը մինչև 2019թ. կատարել է որոշակի լեռնակապիտալ աշխատանքներ և տեղափոխել մակաբացման ապարները, ինչպես նաև 2017 թվականին արդյունահանել է որոշակի ծավալի հանքաքար, սակայն այդ աշխատանքների դիմաց չի վճարել բնապահպանական վճարներ:
8. Արդյունահանած և իրացրած ոսկու հանքաքարի համար չի վճարել ռոյալթի:
9. Մինչ 2021թ-ի մարտը ընդերքօգտագործման համար տրամադրված հողամասի գործառնական, նպատակային նշանակությունը չէր փոխվել արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության:
10. Չի արդարացվել հանքարդյունահանման ծրագրում որպես ազդակիր բնակչության շահագրգռող գործոն օգտագործված՝ զգալի աշխատատեղերի բացման հեռանկարը, մինչդեռ, ըստ Ընկերության ԱՃԹՆ 2018թ-ի հաշվետվության, Ընկերության աշխատանքներում ներգրավված է եղել 10 աշխատակից բոլորն էլ Երևան քաղաքից:
11. 2016թ. Մեղրի խոշորացված համայնքի ձևավորումից հետո ազդակիր Վարդանիձոր և Տաշտուն բնակավայրերը տեսականորեն զրկվել են ընդերքօգտագործման պայմանագրով Ընկերության ստանձնած սոցիալական աջակցությունից ուղղակիորեն օգտվելու հնարավորությունից:
12. ՀՀ ՇՄ նախարարությունը Մեղրասարի ոսկու հանքավայրի համար չի սահմանել մշտադիտարկումների իրականացման վճար:
13. Ազդակիր համայնքի և բնակավայրերի բնակիչներն իրազեկված չեն ԱՃԹՆ գործընթացների մասին:
14. Ընկերության ԱՃԹՆ հաշվետվությունները համադրելի չեն պետական մարմինների հաշվետվությունների հետ:¹²

4.4.12 «ՂԱՐԱԳՈՒԼՅԱՆՆԵՐ» ՓԲԸ, ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՎԱՐԴԱՆԻԶՈՐԻ ՈՍԿԻ-ԲԱԶՄԱՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ

¹² <https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/atmetalsnewfinal.pdf>



Նկար 14. Հանդիպում ՀՀ Սյունիքի մարզի ազդակիր Վարդանիձոր բնակավայրի բնակիչների հետ

1. 15.03.2021թ. դրությամբ տիրապետում է ՇԱԹ-29/524 ընդերքօգտագործման իրավունքը:
2. Շահագործման թույլտվություն ստանալուց ի վեր Ընկերությունն արդյունահանման աշխատանքներ մինչ օրս չի իրականացրել և չի ապահովել ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը:
3. Չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
4. Չի ապահովել ընդերքօգտագործման պայմանագրային պարտավորությունների կատարումը:
5. Ազդակիր բնակավայրերի բնակիչներին չի իրազեկել սոցիալական ծախսերի մասով ստանձնած պարտավորությունների մասին:
6. Իր օգտագործած շարժական մեքենաների համար սահմանվող գույքահարկի դիմաց վճարումներ չի կատարել, չնայած նրան, որ դրանց թողած բնապահպանական և առողջապահական բացասական հետևանքները կրում է տեղի բնակչությունը:
7. Չի արդարացվել հանքարդյունահանման ծրագրում որպես ազդակիր բնակչությանը շահագրգռող գործոն օգտագործված 184 աշխատատեղի բացման հեռանկարը:
8. 2016թ. Մեղրի խոշորացված համայնքի ձևավորումից հետո անմիջական ազդակիր Վարդանիձորի բնակավայրը գրկվել է ընդերքօգտագործման պայմանագրով Ընկերության ստանձնած՝ 1.5 սոցիալական աջակցությունից ուղղակիորեն օգտվելու հնարավորությունից:
9. Ազդակիր համայնքի և բնակավայրերի բնակիչներն իրազեկված չեն ԱՃԹՆ գործընթացների մասին:
10. Ընկերության ԱՃԹՆ հաշվետվությունները համադրելի չեն պետական մարմինների հաշվետվությունների հետ:¹³

¹³ <https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/gharagulyannerfinal.pdf>

4.4.13 «ԹԱԹՍԹՈՈՒՆ» ՍՊԸ, ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԻՃՔԻ ՊՂՆՁԻ ՀԱՆՔԱՎԱՅՐ



Նկար 15. Լիճքի պղնձի հանքի տարածք

1. ՀՀ ՏԿԵ նախարարի 12.05.2021թ. հրամանով դադարեցվել է «Թաթսթոուն» ՍՊԸ-ի ընդերքօգտագործման իրավունքը, ուժը կորցրած ճանաչվել 2013 թվականի փետրվարի 11-ին տրված ՇԱԹ-29/459 թույլտվությունը:¹⁴
2. Ընկերության ԱՃԹՆ հաշվետվությունը ներառում է Լիճքի և Այգեձորի հանքավայրերի վերաբերյալ միասնական տվյալներ:
3. Շահագործման թույլտվություն ստանալուց ի վեր Ընկերությունը Լիճքի հանքավայրի արդյունահանման աշխատանքներ մինչ օրս չի իրականացրել՝ չապահովելով ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը:
4. Չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
5. Չի ապահովել ընդերքօգտագործման պայմանագրային պարտավորությունների կատարումը:
6. Ազդակիր բնակավայրերի բնակիչներն իրազեկված չեն սոցիալական ծախսերի մասով ընկերության ստանձնած պարտավորությունների մասին:
7. Ընկերությունն իր օգտագործած շարժական մեքենաների համար սահմանվող գույքահարկը չի վճարել ազդակիր համայնքին, չնայած նրան, որ դրանց թողած բնապահպանական և առողջապահական բացասական հետևանքները կրում է տեղի բնակչությունը:
8. Ընկերությունը մինչև 2019թ. կատարել է որոշակի լեռնակապիտալ աշխատանքներ և տեղափոխել մակաբացման ապարները, սակայն մինչև 2018 թվականը չի վճարել բնապահպանական վճարներ, միայն 2018թ-ին 2 հանքավայրի համար հաշվարկել և վճարել է 1430254,0 դրամ և 2110954 դրամ:
9. Հանքարդյունահանման ծրագրերում որպես ազդակիր բնակչությանը շահագրգռող գործոն օգտագործված զգալի աշխատատեղերի բացման հեռանկարը չի արդարացվել:

¹⁴ <http://www.mtad.am/files/legislation/693.pdf>

10. Պայմանագրին համապատասխան չի վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը (ռեկուլտիվացիա), ինչպես նաև դրանք պիտանի չի դարձրել տնտեսության մեջ օգտագործման համար կամ բերել անվտանգ վիճակի:
11. 2016թ. Մեղրի խոշորացված համայնքի ձևավորումից հետո անմիջական ազդակիր բնակավայրերը զրկվել են ընդերքօգտագործման պայմանագրով Ընկերության ստանձնած սոցիալական աջակցությունից ուղղակիորեն օգտվելու հնարավորությունից:
12. Ընկերության ԱՃԹՆ հաշվետվությունները համադրելի չեն պետական մարմինների հաշվետվությունների հետ:¹⁵

4.4.14 «ԹԱԹՍԹՈՈՒՆ» ՍՊԸ, ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԶՈՐԻ ՊՂԻՆԶ-ՄՈՒԼԻԲԴԵՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԹԽԿՈՒՏԻ ՏԵՂԱՄԱՍ



Նկար 16. Հանդիպում ՀՀ Սյունիքի մարզի ազդակիր Մեղրի համայնքի համայնքապետարանում

1. ՀՀ ՏԿԵ նախարարի 07.02.2020թ. թիվ 149-Ա հրամանով և «Թաթսթուն» ՍՊԸ-ի համաձայնությամբ դադարեցվել է Ընկերության ՇԱԹ-29/458 ընդերքօգտագործման իրավունքը:
2. Ինչպես Ընկերության, այնպես էլ ՀՀ ՇՄՆ-ի հաշվետվություններում ներկայացված են «Թաթսթուն» ՍՊԸ-ի ընդհանուր գործունեության վերաբերյալ տվյալներ:
3. Շահագործման թույլտվություն ստանալուց ի վեր Ընկերությունն արդյունահանման աշխատանքներ չի իրականացրել և չի ապահովվել Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով սահմանվող ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը:
4. Չի ապահովվել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
5. Չի ապահովվել ընդերքօգտագործման պայմանագրային պարտավորությունների կատարումը:

¹⁵ <https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/tatstounlichqfinal.pdf>

6. Ընկերությունը մինչև մինչև 2018 թվականը չի վճարել բնապահպանական վճարներ: Միայն 2018թ. Ընկերությունը Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի և Լիճքի պղնձի հանքավայրի համար հաշվարկել և վճարել է 1430254,0 դրամ և 2110954 դրամ:
7. 2016թ. Մեղրի խոշորացված համայնքի ձևավորումից հետո անմիջական ազդակիր բնակավայրերը զրկվել են ընդերքօգտագործման պայմանագրով Ընկերության ստանձնած սոցիալական աջակցությունից ուղղակիորեն օգտվելու հնարավորությունից:
8. Չի արդարացվել հանքարդյունահանման ծրագրում որպես ազդակիր բնակչությանը շահագրգռող գործոն օգտագործված զգալի աշխատատեղերի բացման հեռանկարը:
9. Ընկերության ԱՃԹՆ հաշվետվությունները համադրելի չեն պետական մարմինների հաշվետվությունների հետ:¹⁶

4.4.15 «ԼԻՃՔՎԱԶ» ՓԲԸ, ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԻՃՔՎԱԶ-ԹԵՅԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐ



Նկար 17. Լիճքվազ-թեյի ոսկու հանքավայրի տարածք

1. 22.11.2012թ. N ՊՎ-293 ընդերքօգտագործման պայմանագրում, որը վերակնքվել է 24.11.2016 թվականին, չեն ամրագրվել ազդակիր համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում պարտավորություններ և հանքի փակման ծրագիրը:
2. Չի ապահովվել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը՝ մասնավորապես արդյունահանման տարեկան սահմանված ծավալները:
3. Չի ապահովվել ընդերքօգտագործման պայմանագրային պարտավորությունների կատարումը, հատկապես բնապահպանական պատասխանատվության մասով («Բողաքարի» արգելավայր տեխնիկայի մուտք, լցակույտերից փոշու արտանետումներ):

¹⁶ <https://www.ecolor.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/tatstounaygedzorfinalvb.pdf>

4. Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (համայնքի հետ կնքված սոցիալ-տնտեսական համագործակցության մասին շրջանակային համաձայնագիր) շրջանակներում Ընկերությունը կատարել է շոշոփելի ներդրումներ:
5. Փոխադրամիջոցների համար սահմանվող գույքահարկը չի վճարել ազդակիր համայնքին, չնայած նրան, որ լեռնակապիտալ աշխատանքներում ներգրավված փոխադրամիջոցների գործունեության արդյունքում դրանց թողած բնապահպանական և առողջապահական բացասական հետևանքները կրում են ազդակիր բնակավայրերը/համայնքի բնակիչները:
6. Ընկերությունը մինչև 2019 թվականը կատարել է որոշակի լեռնակապիտալ աշխատանքներ և տեղափոխել մակաբացման ապարները, 2018 թվականին կատարել ոսկի, արծաթ և պղինձ պարունակող 40031տ հանքաքարի արդյունահանում, սակայն 2016-2018 թթ. չի վճարել բնապահպանական վճարներ:
7. Չի արդարացվել հանքարդյունահանման ծրագրում որպես ազդակիր բնակչությանը շահագրգռող գործոն օգտագործված 176 աշխատատեղի բացման հեռանկարը: 2018թ-ի դրությամբ Ընկերության աշխատանքներում ներգրավված 43 աշխատակիցներից 26-ն են Սյունիքի մարզից:
8. Ընկերությունը, 2016 թվականին ստանալով Մեղրի գետից ջրօգտագործման թույլտվություն, ոչ մի տարի չի հաշվարկել և վճարել բնօգտագործման հարկը:
9. Արդյունահանած և իրացված խտանյութի համար չի վճարել ռոյալթի:
10. 2016 թվականին Մեղրի խոշորացված համայնքի ձևավորումից հետո անմիջական ազդակիր Լեռվազ և Վարդանիձոր բնակավայրերը զրկվել են Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (համայնքի հետ կնքված սոցիալ-տնտեսական համագործակցության մասին շրջանակային համաձայնագիր) շրջանակներում Ընկերությունը կատարած ներդրումներից:
11. Ազդակիր համայնքի և բնակավայրերի բնակիչներն իրազեկված չեն ԱՃԹՆ գործընթացների մասին:
12. Ընկերության ԱՃԹՆ հաշվետվությունները համադրելի չեն պետական մարմինների հաշվետվությունների հետ:
13. Հանքաքարի վերամշակման ֆաբրիկայի կառուցման՝ ընդերքօգտագործման պայմանագրային դրույթը հակասում է բնապահպանական օրենսդրությամբ սահմանափակվող ՇՄԱԳ եզրակացության 2-րդ պահանջին, համաձայն որի՝ տվյալ տարածքում բացառվում է հանքաքարի վերամշակման (ֆաբրիկա, պոչամբար և այլն) և կուտակման աշխատանքների իրականացումը:
14. Ընկերության կողմից արդյունահանվող մոտ 40,0 հազար տոննա (հետագայում մինչև նախագծային 300,0 հազար տոննա) հանքաքարի՝ Կապանի լեռնահարստացման ֆաբրիկայում մշակումն անխուսափելիորեն կգերազանցի

Գեղանուշի պոչամբարի հզորությունները ինչպես ծավալային, այնպես էլ վթարայնության առումով:¹⁷

4.4.16. «ԳԵՂԻ ԳՕԼՂ» ՄՊԸ, ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵԶՈՐԻ ՈՍԿԻ-ԲԱԶՄԱՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ



Նկար 18. Հանդիպում ՀՀ Սյունիքի մարզի Գեղի բնակավայրի համայնքապետարանում

1. Շահագործման թույլտվություն ստանալուց ի վեր Ընկերությունն արդյունահանման աշխատանքներ մինչ օրս չի իրականացրել և չի ապահովել ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը:
2. Չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
3. Ընդերքօգտագործման պայմանագրային պարտավորությունները կատարել է մասնակիորեն:
4. Ազդակիր բնակավայրերի բնակիչներն իրազեկված չեն սոցիալական ծախսերի մասով հանքարդյունաբերական ընկերության ստանձնած պարտավորությունների մասին:
5. 2016-2018թթ. չի վճարել բնապահպանական վճարներ:
6. Պայմանագրի համաձայն՝ հետախուզումից հետո չի վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը (ռեկուլտիվացիա):
7. 2017թ. Քաջարան խոշորացված համայնքի ձևավորումից հետո անմիջական ազդակիր բնակավայրերը զրկվել են ընդերքօգտագործման պայմանագրով Ընկերության ստանձնած սոցիալական աջակցությունից ուղղակիորեն օգտվելու հնարավորությունից:

¹⁷ <https://www.ecolor.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/lichqvazfinalnew.pdf>

8. Չի արդարացվել հանքարդյունահանման ծրագրում որպես ազդակիր բնակչությանը շահագրգռող գործոն օգտագործված՝ զգալի աշխատատեղերի բացման հեռանկարը:
9. Չի ապահովվել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարումը/բազային 2200000դրամ/¹⁸

4.4.17. «ԼԵՌ-ԷՔՍ» ՍՊԸ, ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՔԱՍԱՐԻ ՊՂԻՆՁ-ՄՈՒԼԲԴԵՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ




Նկար 19. Հարցազրույց ՀՀ Սյունիքի մարզի ազդակիր Նոր Աստղաբերդ բնակավայրի նախկին համայնքապետի հետ

1. «Լեռ-էքս» ընկերությունը, համարելով, որ հանքավայրի ստորերկրյա եղանակով շահագործումը տնտեսապես ձեռնտու չէ, 2015թ. ներկայացրել է հանքավայրի երկրաբանական հետազոտությունների իրականացման հայտ, նպատակ ունենալով հայտնաբերել բաց եղանակով շահագործման համար պիտանի շտոկվերկային բնույթի հանքային գոտիներ, որոնք հնարավորություն կտային հանքավայրում իրականացնել համալիր՝ բաց և ստորգետնյա եղանակներով հանքավայրի շահագործումը:
2. ՀՀ բնապահպանության նախարարությունը 14.12.2015թ. տվել է հանքավայրում 2015-2017թթ. ընթացքում երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման նախնական հայտի գնահատման վերաբերյալ՝ ԲՓ 92 դրական եզրակացությունը:

¹⁸ <https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/geghigoldfinal.pdf>

3. Ֆաբրիկայում վերամշակվել է օրական 1200- 1400 տոննա քանակով Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրից բերված հանքաքարը: 2014 թվականից «Լեռ-էքս» կոմբինատը փակվել է:
4. Չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
5. Այս Ընկերության համար օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար վճար ՀՀ բնապահպանության նախարարության կողմից չի սահմանվել:
6. «Լեռ-էքս» ՍՊԸ-ն տարիներ շարունակ կատարվող լեռնակապիտալ աշխատանքներում օգտագործվող փոխադրամիջոցների համար սահմանվող գույքահարկը չի վճարել:
7. Չնայած կազմակերպության ընդերքօգտագործման պայմանագրի մեջ նշված է, որ ընդերքօգտագործողը պարտավոր է, նախագծի և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համաձայն, վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը (ռեկուլտիվացիա), ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործման համար կամ բերել անվտանգ վիճակի, կազմակերպությունը չի կատարել պայմանագրի այդ պահանջը:
8. Ընդերքօգտագործման պայմանագրում չեն ամրագրվել հանքի փական միջոցառումների և հանքի փական ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքները:
9. Չի արդարացվել հանքարդյունահանման ծրագրում որպես ազդակիր բնակչությանը շահագրգռող գործոն օգտագործված զգալի աշխատատեղերի բացման հեռանկարը:
10. Ընկերության ԱՃԹՆ հաշվետվությունները համադրելի չեն պետական մարմինների հաշվետվությունների հետ:¹⁹

4.4.18. «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ, ԱՄՈՒԼՍԱՐԻ ՈՍԿԵԲԵՐ ՔՎԱՐՑԻՏՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ «ՏԻԳՐԱՆԵՍ», «ԱՐՏԱՎԱԶԴԵՍ» ԵՎ «ԷՐԱՏՈ» ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



¹⁹ <https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/Ierexfinal.pdf>

Նկար 20. Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայր

1. Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրը գտնվում է ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերի սահմանագծում: Ամուլսարի ծրագրի ենթակառուցվածքները գտնվում են Արփա, Դարբ և Որոտան գետերի միջև ընկած տարածքում: «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ին հատկացված հանքավայրի տարածքը 113,0 հա է
2. ՀՀ ՏԿԵՆ-ի և «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի միջև 2020 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված՝ «Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման 2012 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ ՊՎ-245 պայմանագրի փոփոխություն» համաձայնագրով²⁰ հանքավայրի՝ նախկինում մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը սահմանված «շինարարական շրջանը» սահմանվել է 2021 թվականի հունիսի 1-ը: Արդյունահանումը պետք է իրականացվի 9 տարում, հանքի փակման աշխատանքների համար նախատեսված է 5,5 տարի, շահագործման տևողությունն՝ առ 01.01.2036թ-ը:
3. Տեղի ակտիվիստների և բնապահպանների կողմից Ծրագրի տարածք մուտքն արգելափակվել է 2018թ. հունիսից մինչև 2020 թվականի սեպտեմբեր ամիսը: Ներկայումս 22-ամսյա շրջափակումը դադարեցված է: Ընկերության պահնորդական խմբերն անցակետերում հսկում են Ծրագրի տարածքի գործունեության մուտքերը:
4. Ընկերության ԱՃԹՆ հաշվետվությունները համադրելի չեն պետական մարմինների հաշվետվությունների հետ:
5. Հասարակության և բազմաթիվ անկախ փորձագետների համաձայն՝ «Լիդիան Արմենիա» ընկերության Ամուլսարի ծրագրի ռիսկերը թերի են գնահատված, իսկ բնապահպանական փորձաքննական եզրակացությունը տրվել է գործող օրենսդրության և միջազգային կոնվենցիաների դրույթների բազմաթիվ խախտումներով, և անհրաժեշտ է շրջակա միջավայրի վրա Ծրագրի ազդեցության նոր գնահատում:
6. ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության վարույթում քննվող Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման հետ կապված շրջակա միջավայրի աղտոտման մասին տեղեկությունները պաշտոնատար անձանց կողմից դիտավորությամբ թաքցնելու առերևույթ դեպքի առթիվ քրեական գործը 2021թ. մայիսի վերջի դրությամբ դեռևս չի ավարտվել:
7. Ընկերությունը հետևողականորեն հերքում է իր գործունեության դեմ հնչող մեղադրանքները, տարբեր դատական ատյաններում ներկայացնում է հայցեր, անհիմն է համարում ՇՄ նախարարի ինչպես նախորդ՝ Արփա և Դարբ գետերից, այնպես էլ նոր՝ Արփա գետից 41,3 լ/վ տեխնիկական ջրօգտագործման թույլտվության հայտի մերժման 2021թ. մարտի 22-ի N86-Ա հրամանը և հայտարարում բողոքարկման վերաբերյալ իր մտադրությունների մասին:

²⁰ http://www.mtad.am/u_files/file/1/NOR%20Lydian_Paymanagir%20245.PDF

8. Արդեն իսկ կայացված դատական վճիռներ կան պատգամավոր Սերգեյ Բագրատյանի, իրավաբան Նազելի Վարդանյանի, lin.am լրատվական կայքի դեմ ներկայացված «գրպարտության» հայցերով:²¹

4.4.19. «ՎԱՅՔ ԳՈՂԴ» ՍՊԸ, ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԵԿԻ ՈՍԿԻ-ԲԱԶՄԱՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



Նկար 21. Ազատեկի ոսկի-բազմամետաղային հանքավայրի տարածք

1. ՀՀ ՏԿԵ նախարարի 2019թի դեկտեմբերի 19-ի թիվ 711-Ա հրամանով «Վայք Գոլդ» ՍՊԸ-ն գրկվել է ընդերքօգտագործման իրավունքից:
2. 2020թ. փետրվարի 17-ին «Վայք Գոլդ» ՍՊԸ-ն ընդդեմ ՏԿԵ նախարարության հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ նախարարությունից պահանջելով անվավեր ճանաչել վերոնշյալ հրամանը: Հայցադիմումը 2020թ. փետրվարի 21-ին ընդունվել է վարույթ: Գործն անավարտ է: Սույն դատական գործի վերաբերյալ Դատական տեղեկատվական համակարգի կայքում առկա տեղեկատվության համաձայն՝ դատաքննությունը նշանակված է եղել 2021թ. մայիսի 6-ին:
3. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգով իրականացված փորձաքննության արդյունքում փորձաքննական ԲՓ-87 դրական եզրակացությունը 08.08.2006թ-ին ստացել է «Արմենիակ» ՍՊԸ-ն, «Վայք Գոլդ» ՍՊԸ-ն չունի հանքավայրի շահագործման ՇՄԱԳ:
4. 2017թ. հարուցվել է քրեական գործ՝ Ընկերության կողմից հանքավայրից անօրինական հանույթ իրականացնելու համար: 2020թ-ին նույն Ընկերության և «Վայք Ինվեսթ» ՍՊԸ-ի կողմից ընթացել են հանքավայրի բաց-ստորգետնյա եղանակով շահագործման մշակված նախագիծի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության եզրակացության նախնական փուլի հասարակական լսումներ:
5. Հանքավայրի վերաշահագործման հարցում բնակիչների կարծիքը միանշանակ չէ:

²¹ <https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/amulsarfinalnew.pdf>

6. Շահագործման թույլտվություն ստանալուց հետո Ընկերության արդյունահանման աշխատանքներն առ այսօր կրել են էպիգոդիկ բնույթ, չեն պահպանվել ընդերքօգտագործման պայմանագրի պահանջները: Իր անգործության հետևանքով Ընկերությունը չի ապահովել ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը:
7. Ընկերությունը բնապահպանական և բնօգտագործման հարկեր չի հաշվարկել և չի մուծել, հողի հարկ չի մուծել՝ բացասական ազդեցություն է թողել ՀՀ պետական և համայնքային բյուջեի կանխատեսումների գործընթացի վրա:
8. Ընդերքօգտագործման պայմանագիր կնքելիս՝ ազդակիր համայնքները չեն ներգրավվել Ընկերության սոցիալական պատասխանատվության հարցերի քննարկման գործընթացին և չեն արտահայտել իրենց դիրքորոշումը պայմանագրի կնքման ժամանակ:
9. ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի հետ չի կնքել հողի օգտագործման պայմանագիր և չունի հողի օգտագործման իրավունք:
10. Ընկերությունը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը:
11. Այս Ընկերության համար նույնպես ՀՀ բնապահպանության նախարարության կողմից չեն սահմանվել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար վճարներ:
12. Ընկերությունն իր գործունեության ընթացքում չի ապահովել աշխատանքների և իրագործվող ծրագրի թափանցիկությունն ազդակիր համայնքի և շահագրգիռ հասարակայնության նկատմամբ:
13. Ընկերության ԱՃԹՆ հաշվետվությունները համադրելի չեն պետական մարմինների հաշվետվությունների հետ:²²

²² <https://www.ecolor.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/vayqgoldfinalnew.pdf>

4.4.20. «ՎԱՐԴԱՆԻ ԶԱՐԹՈՆՔԸ» ՍՊԸ, ՀՀ ՎԱՅՈՑ ԶՈՐԻ ՄԱՐԶԻ ՍՈՖԻ-ԲԻՆԱՅԻ ՈՍԿԻ-ԲԱԶՄԱՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ



Նկար 22. ՀՀ Վայոց ձորի մարզի ազդակիր Զառիթափ համայնք

1. ՀՀ ՏԿԵ նախարարի 07.08.2020 թվականի թիվ 1075-Ա հրամանով դադարեցվել է «Վարդանի զարթոնքը» ՍՊԸ-ի ընդերքօգտագործման իրավունքը: Նույն հրամանով ուժը կորցրած են ճանաչվել 27.08.2012թ. թիվ ՇԱԹՎ-29/239 օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը և լեռնահատկացման թիվ ԱՎ-239 ակտը, ինչպես նաև լուծվել է 27.09.2012թ. օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-239 պայմանագիրը:
2. Հրամանն Ընկերությունը բողոքարկել է վարչական դատարանում: Վարչական դատարանը մերժել է Ընկերության հայցադիմումը: Ընկերությունը դիմել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարան: 2021թ-ի ապրիլի 12-ի դրությամբ դատարանը հայցն ընդունել է վարույթ: ՏԿԵ նախարարության պաշտոնական կայքում 2021թ-ի մարտի 15-ի դրությամբ առկա «Մետաղական օգտակար հանածոների արդյունահանման մասով գործունեության վերաբերյալ տեղեկատվության» մեջ որպես հանքավայրի շահագործման իրավունքի կրող «Վարդանի զարթոնքը» ՍՊԸ-ն չի նշվում:
3. Շահագործման թույլտվություն ստանալուց հետո Ընկերությունն արդյունահանման աշխատանքներ առ այսօր չի սկսել:
4. Ընկերությունը բնապահպանական և բնօգտագործման հարկեր չի հաշվարկել և չի մուծել, հողի հարկ չի մուծել: Իր անգործության հետևանքով բացասական ազդեցություն է թողել ՀՀ պետական և համայնքային բյուջեի կանխատեսումների գործընթացի վրա:
5. Ընդերքօգտագործման պայմանագիր կնքելիս՝ համայնքը չի ներգրավվել Ընկերության սոցիալական պատասխանատվության հարցերի քննարկման գործընթացին և չի արտահայտել իր դիրքորոշումը պայմանագրի կնքման ժամանակ:
6. Ընկերությունը ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի հետ չի կնքել հողի օգտագործման պայմանագիր և չունի հողի օգտագործման իրավունք:
7. 27.09.2012թ. ՊՎ-239 ընդերքօգտագործման պայմանագիրը չունի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և

կատարման ժամկետների վերաբերյալ դրույթներ, ինչպես նաև այնտեղ չի ամրագրվել հանքի փակման միջոցառումների և հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքների մասին բաժինը:

8. Ընկերությունը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
9. Ընկերությունը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար սահմանվող մշտադիտարկումների վճարները: ՀՀ բնապահպանության նախարարությունը Ընկերության համար մշտադիտարկումների վճար չի սահմանել:
10. Ընկերությունն իր գործունեության ընթացքում չի ապահովել աշխատանքների և իրագործվող ծրագրի թափանցիկությունն ազդակիր համայնքի և շահագրգիռ հասարակայնության նկատմամբ:
11. Ընկերության ԱՃԹՆ հաշվետվությունները համադրելի չեն պետական մարմինների հաշվետվությունների հետ:²³

4.4.21. ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐԻ ԲԱԶՄԱՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



Նկար 23. Գլաձորի բազմամետաղային հանքի տարածք

1. 2016 թվականին «Վայք Մետալ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ բնապահպանության նախարարություն ներկայացված Գլաձորի բազմամետաղային հանքի շահագործման հայտին ՀՀ բնապահպանության նախարարությունը 15.12.2016թ. ԲՓ-105 բացասական փորձաքննական եզրակացությունն է տվել: Ի թիվս այլ պատճառների, բացասական եզրակացության տրամադրումը հիմնավորված է եղել նաև տեղի բնակչության բացասական դիրքորոշմամբ: ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2017 թվականի հուլիսի 13-ի թիվ 88-Ա հրամանով մերժվել է «Վայկ Մետալ» ՍՊԸ-ին Գլաձորի բազմամետաղային հանքավայրի շահագործման իրավունքի տրամադրումը:

²³ <https://www.ecolor.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/vardanizartongfinal.pdf>

2. Ներկայումս «Վայք Մետալ» ընկերությունն օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքի չի տիրապետում:
3. 2020 թվականին «Մետալ Գոլդ» ՍՊԸ-ն մշակել է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Գլաձորի բազմամետաղային հանքավայրի 02.06.2009թ. դրությամբ հաստատված կոնդիցիաների պարամետրերի և պաշարների 2020-23թթ. վերագնահատման և վերահաշվարկման համար» ծրագիրը: ՏԿԵՆ-ը 26.02.2021 թվականին 3 տարի ժամկետով «Մետալ Գոլդ» ՍՊԸ-ին տվել է արդյունաբերական նպատակով երկրաբանական հետազոտության ԵՀԹ-29/309 թույլտվությունը և նրա հետ կնքել Պ-309 20.02.2021թ. պայմանագիրը: Գլաձոր համայնքի բնակիչները 2021թ-ի մայիսի 11-ին թույլ չեն տվել «Մետալ Գոլդ» ՍՊԸ-ին համայնքում Ծրագրի վերաբերյալ հանրային լուսմներ անցկացնել:
4. Ներկայումս որևէ կազմակերպություն չունի Գլաձորի բազմամետաղային հանքավայրի շահագործման իրավունք:
5. Հանքավայրի ներկա պաշարները՝ ցինկի, կապարի և պղինձի համար, դիտարկված են որպես արտադրական նշանակության, որպես ուղեկցող միներալներ նշված են սելենը, կադմիումը, արծաթը և տելուրը: Իսկ ոսկու քանակությունն առանձին փորձանմուշներում գնահատված է մաքսիմալ 1գ/տոննա:
6. «Մետալ Գոլդ» ՍՊԸ-ն 2021 թվականի ապրիլի 9-ի դրությամբ հողհատկացման համար դեռևս չի դիմել համայնքապետարան:²⁴

5. ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԶՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ/ ՄԱՍՆԱԿԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԿՆՔՎԱԾ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հանքարդյունահանման իրավունք կրող, սակայն հատկացված հանքավայրը չշահագործող/մասնակի շահագործող կազմակերպությունները, բացի իրենց կողմից թույլ տված անհատական թերացումները, ունեն ընդհանուր, օրենսդրորեն չկարգավորվող բացթողումներ:

Մասնավորապես.

1. Ուսումնասիրված կազմակերպություններն իրենց անգործության/մասնակի անգործության հետևանքով խախտել են Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին 6-րդ մասով սահմանվող ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործման պահանջը: Սակայն օրենքի պահանջը չպահպանող կազմակերպությունների նկատմամբ օրենսդրական կարգավորումներն իմպերատիվ բնույթ չունեն:
2. Չնայած նրան, որ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 54-րդ հոդվածի 4-րդ կետի և «Ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշման համաձայն ընդերքօգտագործման պայմանագրում պետք է ներառվի հանքի փակման ծրագիրը, այդ

²⁴ <https://www.ecolor.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/gladzorfinal.pdf>

պահանջը կատարել են ուսումնասիրված 19 կազմակերպությունից միայն 10-ը: Մնացած կազմակերպությունների ընդերքօգտագործման պայմանագրերում չեն պահպանվել այս պահանջները: Հանքի փակման ֆինանսական երաշխիքներն իրատեսական չեն և չունեն բավարար հիմնավորումներ: Այս հարցում իրավական առումով պատասխանատուն ՀՀ ՏԿԵՆ-ն է:

3. Չնայած նրան, որ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 54-րդ հոդվածի 4-րդ կետի 9-րդ մասի և «Ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշման համաձայն ընդերքօգտագործման պայմանագրում պետք է ներառվեն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ դրույթներ, այդ պահանջը կատարել են ուսումնասիրված 19-ից միայն 11 ընկերություն: Մնացած 9 կազմակերպությունների ընդերքօգտագործման պայմանագրերում չեն պահպանվել այս պահանջները (ուսումնասիրված Գլաձորի հանքավայրի համար շահագործման իրավունքի կրող կազմակերպություն չկա): Այս հարցում իրավական առումով պատասխանատուն նույնպես ՀՀ ՏԿԵՆ-ն է:

4. Շահագործման թույլտվություն ստանալուց ի վեր, առանձին բացառություններով, կազմակերպությունները շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացումներ մինչև 2018թ. չեն կատարել՝ խախտելով Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 69-րդ հոդվածի և ընդերքօգտագործման պայմանագրի պահանջները:

5. Ընկերությունների մի մասը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը՝ խախտելով Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի և ընդերքօգտագործման պայմանագրի պահանջները: Իրավական առումով դրա պատասխանատուն ՀՀ ՇՄՆ-ն է, որը պարտավոր էր ՇՄԱԳ գործընթացում սահմանել այդ վարձավճարների չափը (ՀՀ կառավարության 2013 թվականի հունվարի 10 N 22-Ն որոշում) և ՀՀ ընդերքի մասին Օրենսգրքի 17-րդ հոդված:

6. Չնայած նրան, որ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի (ուժի մեջ է մտել 2012թ. հունվարի 1-ից) անցումային դրույթների 80-րդ հոդվածին համապատասխան, մինչ 2012թ.-ը կնքված ընդերքօգտագործման պայմանագրերը պետք է վերակնքվեին և համապատասխանացվեին Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի պահանջներին (այդ թվում՝ մշտադիտարկումների մասով), մետաղական հանքավայրեր շահագործող ընկերությունների զգալի մասը հետագա տարիներին վերակնքել է ընդերքօգտագործման պայմանագրերը, սակայն պայմանագրի կողմ հանդիսացող ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը և ընկերությունները չեն անդրադարձել մշտադիտարկումների խնդրին: Իր հերթին ՀՀ բնապահպանության նախարարությունը ՇՄԱԳ փաստաթղթի քննարկման ընթացքում օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման վճարներ չի սահմանել՝ «Թեղուտ» ՓԲԸ-ի՝ Թեղուտի

պղինձ-մոլիբդենային հանքավայր, «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի՝ Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայր, «Մուլտի գրուպ կոնցեն» ՍՊԸ-ի՝ Մղարթի ոսկու հանքավայր, «Սագամար» ՓԲԸ-ի՝ Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայր, «Ատ-մետալս» ՍՊԸ-ի՝ Մեղրասարի ոսկու հանքավայր, «Լեռ էքս» ՍՊԸ-ի՝ Հանքասարի պղինձ-մոլիբդենային հանքավայրի կենտրոնական տեղամաս, «Բակտեկ Էկո» ՍՊԸ-ի՝ Արջուտի ոսկու հանքավայր, «Վայք Գոլդ» ՍՊԸ-ի՝ Ագատեկի ոսկի-բազմամետաղային հանքավայր, «Մեգո Գոլդ» ՍՊԸ-ի՝ Թուխմանուկի ոսկու հանքավայրի կենտրոնական տեղամաս, «Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ-ի՝ Հրազդանի երկաթի հանքավայր, «Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ-ի՝ Դաստակերտի պղնձամոլիբդենային հանքավայր, «Մարջան Մայնինգ քոմփանի» ՍՊԸ-ի՝ Մարջանի ոսկի-բազմամետաղային հանքավայր, «Պարամաունտ գոլդ մայնինգ» ՓԲԸ-ի՝ Մեղրաձորի ոսկու հանքավայրի Լուսաջուրի տեղամաս, «Վարդանի զարթոնք» ՍՊԸ-ի՝ Սոֆի Բինայի ոսկի-բազմամետաղային հանքավայր, համար:

7. 2019-2021թթ. ընթացքում հանքավայրերի շահագործման թույլտվություն ունեցող 6 կազմակերպությունների՝ «Թաթսթոուն» ՍՊԸ /Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի Թխկուտի տեղամաս/, «Վարդանի զարթոնք» ՍՊԸ, «Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ, «Պարամաունտ գոլդ մայնինգ» ՓԲԸ, «Մարջան Մայնինգ Քոմփանի» ՍՊԸ, «Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ, համապատասխան հանքավայրերի շահագործման թույլտվությունները հետ են վերցվել, ևս 2-ը՝ «Վայք Գոլդ» ՍՊԸ-ն, «Մեգո գոլդ» ՍՊԸ-ն, նույնպես իրավունքից զրկվել են, սակայն վերջիններս բողոքարկել են ՏԿԵ նախարարի համապատասխան հրամանները:

8. Ընկերությունների մեծ մասը խախտել է «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի պահանջները: Չնայած սույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 2) կետը սահմանում է, որ հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար գույքահարկ վճարող կազմակերպությունն այս հարկատեսակը պետք է վճարի իր հաշվառման վայրի համայնքի բյուջե, այնուամենայնիվ, «Լեռ-էքս» ՍՊԸ-ն, գրանցված լինելով ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքում (Ստեփանյան փողոց, թիվ 6), համայնքային բյուջե է վճարել միայն շենք շինությունների համար սահմանված գույքահարկը, չվճարելով փոխադրամիջոցների համար սահմանվող գույքահարկը: Այստեղ առկա է օրենսդրական բաց, քանի որ այդ փոխադրամիջոցների գործունեության բնապահպանական և առողջապահական բացասական հետևանքները կրում են տեղի բնակչությունը: Այդ օրենքում պետք է ամրագրվեն համապատասխան կարգավորող դրույթներ:

6. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

6.1. Ընդերքօգտագործման պայմանագրերում հանքի փակման ծրագրերի և ազդակիր համայնքների սոցիալական աջակցության բաղադրիչի ներառման իրավական կարգավորումները, դրանց բացակայության դեպքում պատասխանատվության մեխանիզմները, ինչպես նաև կատարողականի նկատմամբ վերահսկողության լիազոր պետական մարմինները

Հանքի փակման ծրագրի և սոցիալական պատասխանատվության հարցերի իրավական կարգավորման և վերահսկողության հարցերին անդրադարձ է կատարվել ԱՃԹՆ բոլոր երկու զեկույցներում²⁵ (2016-2017թթ. զեկույց և 2018թ. զեկույց) Ներկայացված է նաև բոլոր ընկերությունների ցանկը, որոնք նշել են իրենց փաստաթղթերը՝ ընդերքօգտագործման պայմանագրեր, արդյունահանման նախագծեր և փորձաքննական եզրակացություններ: Ներկայացված են նաև այն ընկերությունները, որոնք առհասարակ որևէ փաստաթղթով չեն սահմանել հանքի փակման և սոցիալական պարտավորությունների մասին տվյալներ, կամ դրանք ներկայացրել են շատ ընդհանրական՝ առանց նախահաշիվ կազմելու: Ինչպես ներկայացված է նշված՝ ԱՃԹՆ զեկույցներում, հարցը հստակ կանոնակարգված չէ:

Իրավական առումով ընկերությունները պարտավոր են հանքի փակման և սոցիալական պարտավորությունների վերաբերյալ պարտականությունները սահմանել ընդերքօգտագործման պայմանագրի հավելվածներով: Մասնավորապես, «Ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման²⁶ համաձայն, պայմանագրին կից երկրորդ հավելվածում (հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ) պետք է ներառվեն հանքի փակման հարցերը, իսկ երրորդ հավելվածում՝ համայնքների նկատմամբ ստանձնած սոցիալ-տնտեսական պարտավորությունները (համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորություններ): Ավելին, կառավարության այս որոշմամբ սահմանված են նաև, թե կոնկրետ ինչպիսի տվյալներ պետք է ներառվեն ընդերքօգտագործման պայմանագրի հավելվածում: Մասնավորապես, հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններն են՝

1. ընդերքօգտագործողի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով հանքի փակման ծրագրով նախատեսված՝ հանքի փակումից հետո աշխատուժի սոցիալական մեղմացման նախատեսվող միջոցառումները (վերաորակավորման դասընթացների կազմակերպում, այլ մասնագիտությունների ուսուցման կազմակերպում, խթաններ և հնարավորություններ ստեղծել այդ աշխատողներին այլ ճյուղեր աշխատանքի տեղավորելու համար և այլն)

2. փակվող հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական մեղմացման նախատեսվող միջոցառումները (համայնքի սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն, փոքր և միջին բիզնեսի կազմակերպման աջակցություն և այլն):

Այս տվյալները պետք է ներկայացվեն աղյուսակի տեսքով: Աղյուսակում պետք է լրացվեն «Միջոցառումների անվանումը», «Կատարման ժամկետը» և «Ներդրումների չափը» սյունակները:

Հանքի փակման պարտավորությունները հստակ ներկայացնելու պահանջի հիմքում ընկած են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով սահմանված դրույթները: Մասնավորապես, նշված օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն, օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք

²⁵ ԱՃԹՆ 2016-2017թթ. 2018թ. զեկույցներ <https://www.eiti.am/hy/annual-reports/2020>

²⁶ «Ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 22 մարտի 2012 թվականի N 437-Ն որոշում <https://www.arlis.am/documentview.aspx?docid=75220>

հայցելու դիմում ներկայացնելիս պետք է ներկայացվի նաև հանքի փակման ծրագիր, որը ներառում է՝

ա. հանքի ֆիզիկական փակման ծրագիրը, որում ներառվում է ենթակառուցվածքների, մեքենաների, սարքավորումների և շինությունների ապամոնտաժումը

բ. օգտակար հանածոյի արդյունահանման հետևանքով խախտված հողատարածքների ռեկուլտիվացիայի, ներառյալ՝ ռեկուլտիվացիայի ծրագիրը հանքի գոյության ընթացքում (եկնելով հանքավայրի շահագործման եղանակից)

գ. աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով

դ. օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման ծրագիրը, և այլ պահանջներ:

Նույն օրենսգրքի 54-րդ հոդվածի համաձայն՝ Օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագիրը պետք է նախատեսի հանքի փակման հետ կապված դրույթները: Սույն ծրագրի շրջանակներում ուսումնասիրված՝ 19 չգործող ընկերությունների ընդերքօգտագործման պայմանագրերի ուսումնասիրությունից պարզվել է, որ նրանցից միայն 9 ընկերություն ունի պայմանագրի 2-րդ հավելվածի համաձայն լրացված նախահաշիվ՝ հանքի փակման և մշտադիտարկումների համար (ցանկը ներկայացված է աղյուսակ 1-ում):

Ընդերքօգտագործման պայմանագրում ներկայացված են հանքի փակման ծրագրի գործողություններ և նախահաշիվ	Պայմանագրի համար	Ընդերքօգտագործման պայմանագրում բացակայում են հանքի փակման ծրագրի գործողությունները և նախահաշիվը	Պայմանագրի համարը
«Գեղի Գօլդ» ՍՊԸ	Պ-544 (22.07.2016)	«Վարդանի զարթոնք» ՍՊԸ	ՊՎ-239 (27.09.2012)
«Բակտեկ Էկո» ՍՊԸ	Պ-515 (22.08.2014)	«Մեզո Գոլդ» ՍՊԸ	ՊՎ-184 (28.12.2012)
«Ղարագուլյաններ» ՓԲԸ	Պ-547 (25.10.2016)	«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ	ՊՎ-425 (28.12.2012)
«Ատ-Մետալս» ՍՊԸ	Պ-514 (16.01.2015)	«Լիճքվազ» ՓԲԸ	ՊՎ-293 (22.11.2012)
«Թաթսթոուն» ՍՊԸ (Լիճք)	Պ-459 (11.02.2013)	«Լեռ-Էքս» ՍՊԸ	ՊՎ-094 (16.08.2012)
«Թաթսթոուն» ՍՊԸ (Այգեձորի՝ «Թխկուտ»	Պ-458 (11.02.2013)	«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	ՊՎ-169 (20.10.2012)

տեղամաս)			
«Վայք Գոլդ» ՍՊԸ	Պ-371 (30.11.2012)	«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	089 (12.06.2012)
«Սազամար» ՓԲԸ	ՊՎ-093 (20.10.2012)	«Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ	ՊՎ-213 (20.10.2012)
«Ասսաթ» ՍՊԸ	ՊՎ-366 (06.06.2013)	«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	ՊՎ-174 (07.11.2012)
		«Մարջան Մայնինգ» ՍՊԸ	ՊՎ-398 (07.03.2013)

Հարկ է նշել, որ ԱՃԹՆ 2018թ. զեկույցում նույնպես ներկայացված է ընկերությունների ցանկը, որոնք ունեն հանքի փակման ծրագրով սահմանված նախահաշիվ²⁷: Նույնը վերաբերում է նաև համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորություններին: «Ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման երրորդ հավելվածով սահմանված է պարտավորություն, որ ընդերքօգտագործման պայմանագրերում պետք է սահմանվի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ընկերության ստանձնած պարտավորությունների չափը և կատարման ժամկետները: Նույն կերպ, ինչպես հանքի փակման վերաբերյալ հավելվածում, տվյալները պետք է ներկայացվեն աղյուսակի տեսքով՝ լրացնելով «Միոցառումների անվանումը», «Կատարման ժամկետը» և «Ներդրումների չափը» սյունակները: Այս պարտավորությունը ևս սահմանված է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով, որի 54-րդ հոդվածի համաձայն՝ օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագիրը պետք է նախատեսի դրույթներ՝ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ:

Ընդերքօգտագործման պայմանագրում առկա է համայնքի սոցիալական աջակցության ծրագրերի իրականացման նախահաշիվ	Պայմանագրի համար	Ընդերքօգտագործման պայմանագրում առկա չէ համայնքի սոցիալական աջակցության ծրագրերի իրականացման նախահաշիվ	Պայմանագրի համարը
«Գեղի Գոլդ» ՍՊԸ	Պ-544 (22.07.2016)	«Վարդանի զարթոնք» ՍՊԸ	ՊՎ-239 (27.09.2012)
«Բակտեկ Էկո» ՍՊԸ	Պ-515 (22.08.2014)	«Մեզո Գոլդ» ՍՊԸ	ՊՎ-184 (28.12.2012)

²⁷ ԱՃԹՆ 2018թ. զեկույց, էջեր՝ 37-39; <https://www.eiti.am/hy/annual-reports/2020>

«Ղարազույաններ» ՓԲԸ	Պ-547 (25.10.2016)	«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ	ՊՎ-425 (28.12.2012)
«Ատ-Մետալս» ՍՊԸ	Պ-514 (16.01.2015)	«Լիճքվագ» ՓԲԸ	ՊՎ-293 (22.11.2012)
«Թաթսթոուն» ՍՊԸ (Լիճք)	Պ-459 (11.02.2013)	«Լեռ-Էքս» ՍՊԸ	ՊՎ-094 (16.08.2012)
«Թաթսթոուն» ՍՊԸ (Այգեձորի՝ «Թխկուտ» տեղամաս)	Պ-458 (11.02.2013)	«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	ՊՎ-169 (20.10.2012)
«Վայք Գոլդ» ՍՊԸ	Պ-371 (30.11.2012)	«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	089 (12.06.2012)
«Սագամար» ՓՊԸ	ՊՎ-093 (20.10.2012)	«Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ	ՊՎ-213 (20.10.2012)
«Ասսաթ» ՍՊԸ	ՊՎ-366 (06.06.2013)	«Մարջան Մայնինգ» ՍՊԸ	ՊՎ-398 (07.03.2013)
«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	ՊՎ-174 (07.11.2012)		

Ինչ վերաբերում է հարցին, թե որ լիազոր մարմիններն են պատասխանատու ապահովել, որպեսզի ընկերությունների այս պարտավորությունները պատշաճ կերպով ամրագրվեն ընդերքոգտագործման պայմանագրերում և կատարվեն, ապա ներկայումս ինստիտուցիոնալ առումով դրա պատասխանատուն է ՀՀ ՏԿԵՆ-ը, քանի որ դա այն պետական մարմինն է, որի հետ ընկերությունը կնքում է ընդերքոգտագործման պայմանագիր: Որևէ այլ պետական և նույնիսկ տեղական ինքնակառավարման մարմին չունի լիազորություն այս պարտավորության կատարման նկատմամբ իրականացնել ստուգում կամ այլ տիպի վարչական վերահսկողություն: Ընկերություններն այս պարտավորությունների կատարման նկատմամբ հաշվետվությունները նույնպես ներկայացնում են ՏԿԵՆ: Պարտավորությունը չկատարելու համար պատասխանատվության մեխանիզմ կարող են լինել **ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ պայմանագրային պարտավորությունները չկատարելու վերաբերյալ իրավահարաբերությունները և պատասխանատվության միջոցները (ընդհուպ մինչև պայմանագրի լուծում, եթե դա դիտվի որպես պայմանագրի դրույթների էական խախտում):**

Առանձին հիմնախնդիր է ընդերքոգտագործման պայմանագիր կնքելիս ՏԻՄ-երի ներգրավվածության հարցը: Գործնականում, պայմանագրերում նշված՝ համայնքների սոցիալական աջակցության վերաբերյալ դրույթները միօրինակ են ու կրկնվող: Ընդերքոգտագործման պայմանագիրը կնքվում է ընկերության և պետական կառավարման լիազոր մարմնի միջև (ՏԿԵՆ): Համայնքի ներկայացուցիչները ներգրավված չլինելու պատճառով միշտ չէ, որ սոցիալական աջակցության ծրագրերում արտացոլված գործողությունները համապատասխանում են ազդակիր համայնքների առաջնահերթություններին: Ենթադրվում է, որ համայնքային խնդիրները քննարկվում են արդյունահանման նախագծի հանրային քննարկումների փուլում և պետք է արտացոլված

լինեն հաջորդիվ կնքվող ընդերքօգտագործման պայմանագրերում: Այս մոտեցումը, սակայն, իրեն չի արդարացնում: Չլինելով պայմանագրի կողմ՝ համայնքը զրկված է իր համար կարևոր սոցիալական հարցերը իրավաբանորեն պարտադիր կամահայտնության միջոցով ընդերքօգտագործման պայմանագրերում ամրագրելու հնարավորությունից: Միննույն ժամանակ, չկա նաև օրենքով սահմանված պահանջ և մեխանիզմ, որ համայնքի ներկայացրած սոցիալական ծրագրերը պարտադիր լինեն ընդերքօգտագործման պայմանագրում ամրագրելու համար:

6.2 Շրջակա միջավայրի բաղադրիչների նկատմամբ մշտադիտարկումների վարձավճարները սահմանող ՇՄՆ-ի բացթողումները (իրավական կարգավորումներ)

ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքն սահմանում է երկու տեսակի մշտադիտարկումների վերաբերյալ իրավական հարաբերություններ: Դրանցից մեկը ձևակերպված է որպես «ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկում», իսկ մյուսը՝ «օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման համար մշտադիտարկումներ»: Մշտադիտարկումների այս երկու տեսակներից յուրաքանչյուրի համար ՀՀ կառավարության որոշումներով սահմանված է առանձին կարգ:

«Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ²⁸ սահմանվում են մշտադիտարկման այս տեսակի նպատակները, բովանդակությունը և այլ մանրամասներ:

Լիազոր մարմինը (ՇՄՆ) եռամսյակային հաղորդումներն ու ամփոփ տարեկան հաշվետվություններն ստանալուց հետո ամփոփում է դրանք և 10 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրում լիազոր մարմնի պաշտոնական կայքում: Ընդերքօգտագործողի էլեկտրոնային կայքի առկայության դեպքում մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ ամփոփ տարեկան հաշվետվությունը տեղադրվում է այդ կայքում:

Այսպիսով, մշտադիտարկումների այս տեսակը սահմանված կարգով իրականացնելու և տվյալների մատչելիությունն ապահովելու պարտավորությունն ամբողջությամբ ընկած է ընդերքօգտագործողի վրա, որի համար նա չի իրականացնում մշտադիտարկումների համար վճարում:

²⁸ «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018 թվականի N 191-Ն որոշում <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=120135>

Սույն ծրագրով ուսումնասիրված կազմակերպություններից այս կարգի մշտադիտարկումներ իրականացնելու մասին ՇՄՆ հաղորդագրություններ են ներկայացրել՝ «Լիճքվազ» ՓԲԸ-ն՝ 2018թ, 2020թ. երրորդ եռամսյակի համար, «Թաթսթոուն» ՍՊԸ-ն՝ (Սյունիքի մարզի Լիճքի պղնձի հանքավայր)՝ 2019թ. տարեկան ամփոփ, «Մուլտի գրուպ կոնցեռն» ՍՊԸ-ն՝ (Թուխմանուկի ոսկու հանքավայր) 2019թ. հանքավայրը չչահագործելու հիմնավորմամբ մշտադիտարկումներ չիրականացնելու մասին²⁹:

Մշտադիտարկումների մյուս տեսակը օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման համար մշտադիտարկումների իրականացումն է: ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն, օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծ ներկայացնելիս, ընկերությունը պարտավոր է նախագծում ներառել նաև մշտադիտարկումների ծրագիրը, իսկ 17-րդ հոդվածի համաձայն, մշտադիտարկումների ծրագիրը ենթակա է հաստատման ՇՄԱԳ իրականացման փուլում: Օրենսգրքի 54-րդ հոդվածի համաձայն՝ ընդերքօգտագործման պայմանագիրը պետք է պարունակի դրույթներ մշտադիտարկումների իրականացման հատկացումների վճարումների ժամանակացույցի վերաբերյալ: Մշտադիտարկումների այս տեսակն իրականացվում է ՇՄՆ կողմից, որի դիմաց ընդերքօգտագործողն իրականացնում է համապատասխան վճարումներ:

«Օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման³⁰ համաձայն, մշտադիտարկումներ իրականացվում են

- 1) օգտակար հանածոների արդյունահանված տարածքում
- 2) արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տարածքում

Մշտադիտարկումների կառուցվածքն ու բովանդակությունը, դիտակետերի տեղադրումը և մշտադիտարկումների հաճախականությունը ամրագրվում է հանքի փակման ծրագրում և յուրաքանչյուր կոնկրետ օբյեկտում որոշվում է՝ ելնելով դրա երկրաբանական, հիդրոերկրաբանական, ինժեներաերկրաբանական պայմաններից, ինչպես նաև պայմանավորված է հանքավայրում ընդերքօգտագործողի կողմից իրականացված մշտադիտարկումների տվյալներով:

²⁹ <http://www.mnp.am/am/pages/233>

³⁰ «Օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 10 հունվարի 2013 թվականի N 22-Ն որոշում <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=80784>

Մշտադիտարկումների իրականացման հաշվարկային բազային չափ է համարվում հանքի փակման ծրագրի բաղկացուցիչ մաս հանդիսացող մշտադիտարկումների ծրագրով նախատեսված մշտադիտարկումների նախահաշվային արժեքը, որն իրականացնում են ընդերքօգտագործողները՝ նախնական հատկացման և ամենամյա ընթացիկ հատկացումների ձևով: Մշտադիտարկումների իրականացման նպատակով հատկացված գումարները պահվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական գանձապետարանում լիազոր մարմնի անվամբ բացված դեպոզիտային հաշվում: Տվյալ տարում մշտադիտարկումների իրականացումը ֆինանսավորվում է ՇՄՆ համապատասխան արտաբյուջետային հաշիվ մուտքագրված գումարների հաշվին:

Այսպիսով, մշտադիտարկումների այս տեսակն իրականացնում է ՇՄՆ-ն, որի դիմաց ընդերքօգտագործողը սահմանված կարգով և չափով իրականացնում է պարբերական վճարումներ, որոնց հաշվին պետական լիազոր մարմինն ապահովում է մշտադիտարկումների իրականացումը և արդյունքների վերաբերյալ հրապարակում ամենամյա հաշվետվություններ: Այնուհանդերձ, մշտադիտարկումների համար սահմանված վճարների մասին պարտավորությունը բազմաթիվ ընդերքօգտագործման պայմանագրերում բացակայում է: Սա պայմանավորված է նրանով, որ այդ պահանջը նախատեսվել է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով, որն ուժի մեջ է մտել 2012թ. հունվարի 1-ից: Մինչ այդ կնքված պայմանագրերում այդ պահանջը բացակայում էր: Հարկ է նշել, որ օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո բոլոր ընդերքօգտագործման պայմանագրերը պետք է համապատասխանացվեին նոր պահանջներին, սակայն այս հարցում ոլորտը կարգավորող մարմինները թերացել են: Այս հիմնախնդիրը քննարկվել է նաև ԱՃԹՆ 2018թ. զեկույցում³¹:

Հաշվի առնելով, որ պետության կողմից ընդերքօգտագործման պայմանագրի կողմ է ՏԿԵՆ-ը, վերջինս պետք է նախաձեռնություն դրսևորի մշտադիտարկումների համար և, առհասարակ, հանքի փակման ու համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ պայմանները ընդերքօգտագործման պայմանագրերում ամրագրելու հարցում:

Ինչ վերաբերում է մշտադիտարկումների վերաբերյալ պայմանագրում ամրագրված պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվությանը, ապա այս հարցի կարգավորումները բխում են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածից, համաձայն որի այդ պարտավորությունները չկատարելու համար ընկերությունը կարող է ՏԿԵՆ-ի կողմից գրավոր զգուշացում ստանալ և սահմանել պարտավորության կատարման ժամկետ: Սահմանված ժամկետում պարտավորությունը չկատարելու դեպքում ընդերքօգտագործման իրավունքը կարող է դադարեցվել: Այս հարցը առավել մանրամասն ներկայացված է հաջորդիվ:

Մշտադիտարկումների վճարների, ինչպես նաև հանքի փակման հետ փոխկապակցված՝ շրջակա միջավայրի պահպանման (ռեկուլտիվացիոն) դրամագլխի համալրման հարցում կա ևս մեկ առանձնահատկություն: ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի անցումային դրույթներով սահմանված է, որ օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 12 ամսվա ընթացքում, ընդերքօգտագործողները պարտավոր են դիմել լիազոր մարմին՝ իրենց ընդերքօգտագործման իրավունքը (լիցենզիա, պայմանագիր, լեռնահատկացման ակտ) վերաձևակերպելու համար:

³¹ ԱՃԹՆ 2018թ. զեկույց, էջ 36-րդ

Միևնույն ժամանակ, նույն՝ անցումային դրույթներով սահմանված է նաև, որ մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը ծագած պայմանագրային հարաբերությունների նկատմամբ սույն օրենսգիրքը կիրառվում է միայն այն իրավունքների ու պարտականությունների մասով, որոնք կծագեն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո: Այսինքն, նոր պարտավորությունները չպետք է տարածվեն նախկինում կնքված պայմանագրերով ամրագրված պարտավորությունների վրա:

Այսպիսի կարգավորման պայմաններում հարց է առաջանում, թե արդյոք մշտադիտարկումների համար և ռեկուլտիվացիոն ֆոնդին գումար վճարելու պարտավորությունները պետք է տարածվեն նախկինում եղած պարտավորությունների վրա: Այստեղ դժվար է միանշանակ պատասխանել: Սակայն հարկ է նշել, որ բոլոր ընկերությունների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերը 2012 թվականից հետո վերակնքվել են ՀՀ կառավարության կողմից մշակված՝ ընդերքօգտագործման պայմանագրի օրինակելի ձևին համապատասխան, որտեղ սահմանված են նաև հանքի փակման և համայնքի նկատմամբ սոցիալական պարտավորությունների վերաբերյալ հավելվածներ: Ավելին, նախկինում կնքված որոշ պայմանագրերի վերաձևակերպման արդյունքում սահմանվել են մշտադիտարկումների և ռեկուլտիվացիոն վճարների վերաբերյալ նոր պարտավորությունները՝ պայմանագրերի օրինակելի ձևին համապատասխան: Այս դեպքում հարց է առաջանում, թե ինչու այս փոփոխությունները չեն կատարվել բոլոր ընդերքօգտագործման պայմանագրերում:

6.3 Ռոյալթիների վճարները կարգավորող իրավական փաստաթղթերի վերլուծություն, վճարների ժամկետներ և գործընթացներ, երբ են տալիս, ինչ օրենքով է կարգավորվում, չվճարելու դեպքում պատասխանատվության միջոցներ (հանքի կամ դրա վերամշակման արդյունքի, վաճառքի)

Ռոյալթիի վճարները կարգավորող հիմնական իրավական ակտը ՀՀ հարկային օրենսգիրքն է: Ռոյալթին բնօգտագործման վճարի տեսակ է մետաղական օգտակար հանածոների օգտագործումը փոխհատուցելու նպատակով, ինչպես նաև մետաղական օգտակար հանածոների և դրանց կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի օտարումից ստացվող շահութաբերության համար և վճարվում է պետական բյուջե: Ռոյալթիի բազա է համարվում հաշվետու ժամանակաշրջանում համապատասխան արտադրանքի իրացման շրջանառությունը, որը որոշվում է հաշվեգրման եղանակով:

Հաշվետու տարին կամ հարկային տարին որևէ տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածն է: ՀՀ հարկային օրենսգրքի 211-րդ հոդվածի համաձայն՝ «Ռոյալթիի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին»: Քանի որ ռոյալթին հաշվարկվում է իրացման շրջանառությունից, ուստի ռոյալթիի վճարման պարտավորությունն առաջանում է իրացման պահից սկսած: Հետևապես, հարկման հաշվետու տարին որոշվում է իրացման տարվա մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը:

Չվճարելու կամ վճարումն ուշացնելու դեպքում առաջացող պատասխանատվության միջոցները համապատասխանում են հարկային պարտավորությունները պատշաճ չկատարելու համար նախատեսված ընդհանուր կարգավորումներին: Հարկային մարմնի

որոշմամբ կարող են կիրառվել ՀՀ հարկային օրենսգրքի 400-րդ հոդվածով սահմանված հետևյալ հարկային պատասխանատվության միջոցներից որևէ մեկը՝

- 1) նախագուշացում
- 2) տույժ
- 3) տուգանք
- 4) հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքի բռնագրավում
- 5) հարկ վճարողի գործունեության կասեցում:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով նախատեսված վճարները սահմանված օրվանից մեկ ամսվա ընթացքում չվճարելու դեպքում լիազոր մարմինը (ՏԿԵՆ) ընկերությանը կարող է տալ գրավոր զգուշացում, որից հետո ընդերքօգտագործման իրավունքը կարող է կասեցվել, եթե ընկերությունը սահմանված ժամկետում (մինչև 90 օր) չվերացնի խախտման հիմքը: Ընդերքօգտագործման իրավունքը դադարում է, եթե ընդերքօգտագործողը լիազոր մարմնի սահմանած ժամկետում չի վերացրել զգուշացման հիմք հանդիսացող խախտումը՝ տվյալ դեպքում՝ օրենքով սահմանված վճարումների կատարումը: Այստեղ կարևոր է նշել, որ նշված խախտման համար լիազոր մարմնի կողմից ընդերքօգտագործողին գրավոր զգուշացում տալը կամընտրական գործողություն է, քանի որ օրենքի տեքստում այս գործառույթը սահմանված է «կարող է տալ» ձևակերպմամբ, մինչդեռ գրավոր զգուշացումը սահմանված ժամկետում չկատարելու դեպքում ընդերքօգտագործման իրավունքի դադարեցումը կատարվում է իմպերատիվ կերպով: Ի դեպ, լիազոր մարմինն իրավունք ունի միակողմանի լուծելու ընդերքօգտագործման պայմանագիրը: Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման հիմքեր նախատեսված են նաև այլ իրավախախտումների համար:

6.4. ԱՃԹՆ շրջանակներում պետական մարմինների և տվյալ կազմակերպության հաշվետվությունների նույնականացման հարցը

ԱՃԹՆ շրջանակներում պետական մարմինների և ընդերքօգտագործողների ներկայացրած տվյալները համադրվում են ԱՃԹՆ զեկույցը կազմող անկախ ադմինիստրատորի կողմից ԲՇԽ-ի կողմից սահմանված էականության շեմերի հաշվառմամբ: Մետաղական օգտակար հանածոներ արդյունահանող ընկերությունների համար ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից սահմանվել է 150 մլն. դրամի էականության շեմ: Դա նշանակում է, որ անկախ ադմինիստրատորը իրականացնում է պետական մարմինների կողմից հրապարակվող հաշվետվությունների և ընդերքօգտագործող ընկերությունների հաշվետվությունների համադրում միայն այն դեպքում, երբ տվյալ ընկերության կողմից հաշվետու տարվա ընթացքում վճարված բոլոր հարկերը հավասար են կամ ավելի 150 մլն. դրամից (ԱՃԹՆ վերջին՝ 2018թ. զեկույցի համաձայն դրանք 9-ն են): Այդ շեմից ցածր հարկային վճարումներ իրականացրած ընկերությունները նույնպես ներկայացնում են հաշվետվություններ, դրանք հասանելի են առցանց հարթակում, սակայն դրանք անկախ ադմինիստրատորի կողմից չեն համադրվում:

Որոշակի դեպքերում ընկերությունների և պետական մարմինների ներկայացրած հաշվետվությունների թվերն էապես տարբերվում են: Հաշվետվությունների տվյալների տարբերությունը դեռևս չի նշանակում, որ առկա են չարաշահումներ: Տարբերությունները կարող են լինել տարբեր տեխնիկական կամ հաշվարկային պատճառներով: Ըստ էության,

օրենսդրությունը չի պահանջում, որ էականության շեմը չգերազանցող տվյալների տարբերության հարցում իրականացվի քննություն կամ այլ իրավական գործընթաց: Այս հարցի վերաբերյալ ԱՃԹՆ ԲՇԽ-ի որոշմամբ սահմանված է տարբերությունների էականության շեմ, որը գերազանցելու դեպքում անկախ ադմինիստրատորը պետք է իրականացնի համադրում: Եթե պետական մարմինների և ընկերությունների ներկայացրած հաշվետվությունների վերլուծությունից հետևում է, որ տարբերությունը կազմում է 1մլն. դրամ և ավելի, ապա անկախ ադմինիստրատորն իրականացնում է համադրում, իսկ եթե ոչ, ապա ենթադրվում է այդ տարբերությունը էական չէ համադրում անելու համար: Համադրում անելու դեպքում խնդիրը ներկայացվում է ԱՃԹՆ զեկույցում, որից հետո պատկան մարմինները պետք է խնդիրն ուսումնասիրեն և պարզեն տարբերությունների պատճառները: Էական չարաշահումներ բացահայտելու դեպքում կիրականացվի համապատասխան քննություն հարկային կամ այլ պետական լիազոր մարմինների կողմից:

6.5. Կազմակերպությունների ոչ անընդհատ աշխատելու իրավական պատասխանատվության և այդ դեպքում ՇՄԱԳ-ի վերանայման հիմքի մասին

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածով սահմանված են այն պատասխանատվության միջոցները, որոնք կարող են հանգեցնել ընդերքօգտագործման իրավունքի կասեցման կամ դադարեցման: Ընդերքօգտագործման իրավունքը դադարեցման հիմք է հանդիսանում, երբ ընդերքօգտագործողը լիազոր մարմնի կողմից ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված իրավախախտումներից որևէ մեկի համար ստացել է զգուշացում, սակայն զգուշացում ստանալուց հետո լիազոր մարմնի սահմանած ժամկետում (մինչև 90 օր) չի վերացրել զգուշացման հիմքերը: Գրավոր զգուշացման, ապա նաև իրավունքի դադարեցման հիմք հանդիսացող խախտումներ են նաև՝

- եթե ընկերությունը չի կատարում ընդերքօգտագործման իրավունքի պայմանները, այդ թվում՝ ընդերքօգտագործման պայմանագրով, ծրագրով կամ նախագծով ընդերքօգտագործման իրավունքով նախատեսված իր պարտավորությունների իրականացմանն առնչվող պայմանները
- չի կատարում ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով նախատեսված պարտավորությունները:

Այսպիսով, ընկերության պայմանագրային կամ նախագծային պարտավորությունների խախտումը գրավոր զգուշացումից հետո կարող է հանգեցնել ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման: Բոլոր ընդերքօգտագործող ընկերություններն ունեն լիազոր պետական մարմնի հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրեր, որտեղ հստակ արձանագրված են սահմանված ժամկետներում և քանակությամբ օգտակար հանածո արդյունահանելու և այլ պարտավորություններ: Հետևապես, եթե լիազոր մարմինը հետամուտ լինի խախտումը վերացնելու պահանջի և դրա կատարման նկատմամբ վերահսկողության հարցում, ապա փաստացի չգործող գրեթե բոլոր ընդերքօգտագործող ընկերությունները կհայտնվեն իրավունքը դադարեցնելու ռիսկի առջև, քանի որ հաշվետվությունների վերլուծությունից հետևում է, որ բոլորն էլ ունեն պայմանագրային և այլ պարտավորությունների իրականացման էական թերացումներ:

ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքը կարգավորում է ընդերքօգտագործման պայմանագրի կամ նախագծային դրույթների վերահսկողության հարցերը: Օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն՝ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ստացած անձը պարտավոր է աշխատանքներն իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի և նախագծի պայմաններին համապատասխան, ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:

Օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ Ընդերքի օգտագործման և պահպանության պետական վերահսկողության ուղղություններից է փորձաքննության ենթարկված փաստաթղթերով ամրագրված ընդերքօգտագործման պահանջների ու միջոցառումների ապահովումը: Նույն հոդվածի համաձայն՝ ընդերքի օգտագործման և պահպանության պետական վերահսկողությունն իրականացվում է նաև ընդերքօգտագործման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ: Հարկ է նշել, որ ՇՄԱԳ փորձաքննական եզրակացության պարտադիր պայմանների կատարման նկատմամբ վերահսկողությունը մտնում է ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից ստուգման ենթակա հարցերի ցանկում:

Ի տարբերություն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը պատասխանատվություն է սահմանում ոչ թե պայմանագրային հարաբերությունների խախտման, այլ միայն ՇՄԱԳ փորձաքննական եզրակացության պայմանների խախտման համար: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ առանց փորձաքննական դրական եզրակացության արգելվում է հիմնադրությային փաստաթղթի ընդունումը կամ նախատեսվող գործունեության իրականացումը: Այս դրույթը համապատասխանում է Ընդերքի մասին օրենսգրքի այն կարգավորմանը, որի համաձայն՝ ընդերքօգտագործման իրավունք չի կարող տրամադրվել առանց համապատասխան փորձաքննություններ անցած ընդերքօգտագործման նախագծի:

Նույն օրենքի համաձայն, փորձաքննական դրական եզրակացությունն ուժը կորցրած է ճանաչվում, եթե՝

- գործունեությունն իրականացվում է փորձաքննության ենթարկված նախագծային փաստաթղթերի և փորձաքննական եզրակացության պահանջների շեղումներով
- փորձաքննության ենթարկված նախագծային և հիմնադրությային փաստաթղթերում կատարվել են շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փոփոխություններ՝ առանց լիազոր մարմնին այդ մասին տեղեկացնելու:

Ի լրումն Ընդերքի մասին օրենսգրքի՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանվում է նաև, որ փորձաքննական եզրակացությունը կորցնում է ուժը, եթե նախատեսվող գործունեության իրականացումը չի սկսվում փորձաքննական եզրակացության տրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում: Այս կարգավորումը ևս միանշանակ չի կարելի մեկնաբանել՝ հաշվի առնելով, որ արդյունահանման

թույլտվություն տրամադրելու համար իրականացվում է մեկ միասնական ՇՄԱԳ փորձաքննություն, որը վերաբերում է ինչպես արդյունահանման, այնպես էլ դրան նախորդող շինարարության փուլերին: Ստացվում է, որ եթե սկսել են շինարարական աշխատանքները, սակայն մեկ տարվա ընթացքում չի սկսել արդյունահանումը, դա չի կարող հիմք հանդիսանալ փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու համար, քանի որ «գործունեություն» եզրույթի տակ կարող է մեկնաբանվել նաև շինարարական աշխատանքների իրականացման փուլը: Առնվազն մետաղական հանքարդյունաբերության ոլորտի պրակտիկայում չեն արձանագրվել դեպքեր, երբ փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած է ճանաչվել այս հիմքով:

Ինչ վերաբերում է ընդերքօգտագործման իրավունք ունեցող, սակայն փաստացի չգործող ընկերություններին, ապա այս հարցերը ենթակա են կարգավորման ոչ թե ՇՄԱԳ փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու, այլ պայմանագրային պարտավորությունները խախտելու իրավական հիմքերով, քանի որ արդյունահանման ծավալներին և դրա ժամկետներին վերաբերող պարտավորությունները սահմանվում են ընդերքօգտագործման թույլտվությամբ և դրա հետ միասին կնքվող ընդերքօգտագործման պայմանագրով:

7.6 Ֆինանսական երաշխիքների ոչ-իրատեսական տվյալների ներկայացում

Ընկերություններն իրենց գործունեությունը սկսելու համար լիազոր մարմնին են ներկայացնում ֆինանսական երաշխիքներ: Սա կարգավորվում է ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 28-ի «Ընդերքօգտագործման իրավունք հայցող կազմակերպության ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունների բովանդակությունը և դրանց ներկայացվող պահանջները» N 367-Ն որոշմամբ: Ընդերքօգտագործող ընկերությունների զանգվածային չաշխատելու, սնանկացման գործընթացներ սկսելու հանգամանքը թույլ է տալիս ենթադրել, որ ընդերքօգտագործման հայտատուների կողմից ներկայացված ֆինանսական կարողությունների և միջոցների, վարկային մասի, ինչպես նաև ֆինանսական կազմակերպության հետ կնքված վարկային գծի տրամադրման կամ բանկային երաշխիքի, կամ ներգրավված ֆինանսական միջոցների փոխառության մասին պայմանագրի վերաբերյալ տեղեկատվությունները կա՛մ եղել են ոչ հավաստի, կա՛մ կրել են ձևական բնույթ:

6.7 «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով ամրագրել ՇՄԱԳ եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու հստակ և իմպերատիվ պայմաններ

Գործնականում անհնարին է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի, որը սահմանում է փորձաքննության եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու մասին դեպքերը և պայմանները, գործընթացում ներգրավված կողմերի լիազորությունները և պարտականությունները, կիրարկումը, քանի որ այն պարունակում է հակասություններ այլ իրավական ակտերի հետ: Մասնավորապես,

հողվածի 1-ին մասը հակասում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածի 3-րդ մասին, քանի որ ընդերքօգտագործողի վրա այս դրույթով դրվում են նոր պարտականություններ և պատասխանատվություն, կամ խստացվում են նրանց նկատմամբ հարկադրանքի միջոցները: Օրենքի կամ իրավունքի անալոգիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են անձանց իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսվում է նոր պարտականություն կամ պատասխանատվություն, կամ խստացվում են նրանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության, հարկադրանքի միջոցները կամ դրանց կիրառման կարգը, հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարման կարգը, անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու պայմանները և կարգը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով հաստակ սահմանել «Էկոլոգիական գործոններ», կամ «Էկոլոգիական նոր գործոններ» եզրույթները

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 5 ենթակետը կիրարկելու համար չկա «Էկոլոգիական գործոններ», կամ «Էկոլոգիական նոր գործոններ» եզրույթների հաստակ և հասկանալի սահմանում, և դրա մեկնաբանությունը փորձագետի կողմից կարող է ընկալվել սուբյեկտիվ և վերլուծության գործընթացում ծնել կոռուպցիոն ռիսկ: Անհրաժեշտ է, որպեսզի այդ հասկացությունն ընկալվի միատեսակ և միանշանակ, ապահովի Օրենքի էությունից բխող դրա կիրառելիությունը: Սա «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջն է: Սա հնարավորություն կստեղծի նաև ՀՀ կառավարության 2015 թ. ապրիլի 22-ի «Փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու կարգը սահմանելու մասին» N 428 որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետով սահմանված՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոնի անաչառ վերլուծության և համապատասխան եզրակացության կատարելու համար: Կրացառի փորձագետի կոռուպցիան ռիսկերը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում կատարել փոփոխություն՝ կապված ՇՄԱԳ եզրակացության փորձագիտական պայմանների նկատմամբ վերահսկող մարմնի հետ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի «Փորձաքննության գործընթացում լիազորված պետական կառավարման մարմնի լիազորությունները» սահմանող 10-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ ՀՀ ՇՄՆ-ին է վերապահված փորձաքննական եզրակացության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման լիազորությունները: Անհրաժեշտ է հոդված 10-ի 1-ին մասի 8-րդ կետում կատարել համապատասխան փոփոխություն և փորձաքննական եզրակացության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը վերապահել ՀՀ կառավարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին:

Անհրաժեշտ է կատարել նաև համապատասխան փոփոխություններ ՀՀ կառավարության 2015 թ. ապրիլի 22-ի «Փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու կարգը սահմանելու մասին» N 428 որոշմամբ հաստատված կարգի 7 և 8-րդ կետերում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում «ազդակիր համայնք» եզրույթը փոխարինել «ազդակիր բնակավայր կամ բնակավայրեր» եզրույթով

Համայնքների խոշորացման ծրագրի իրականացման արդյունքում մի համայնքի մեջ միավորվել են մի քանի՝ այդ թվում նաև տվյալ ընդերքօգտագործման ծրագրին ազդակիր չհանդիսացող բնակավայրեր: Մետաղական հանքավայրերի արդյունահանման և ուսումնասիրության գործընթացում հանրային կարծիքի հաշվի առնելու նպատակով կազմակերպվող հանրային լուսմների բոլոր փուլերում Օրենքով սահմանվում է ազդակիր համայնքներում քննարկումների կազմակերպում:

Հանրային քննարկումներին ազդակիր համայնքների ներկայացուցչական կազմը, սովորաբար շատ սակավ է լինում, քանի որ հանրային ծանուցման և քննարկումների կազմակերպիչը՝ համայնքի ղեկավարը, մասնակիցների թիվը համալրում է հիմնականում իր աշխատակազմի, կամ համայնքի ղեկավարի նստավայր հանդիսացող բնակավայրի ներկայացուցիչներով: Համայնքների խոշորացման հետ կապված, ազդեցություն կրող բնակավայրի բնակիչները ստիպված են գնալ խոշորացված համայնք՝ դրա ազդեցություն չկրող բնակավայրերի բնակիչների հետ քննարկմանը մասնակցելու: Եվ շատ տրամաբանական է, որ ընդհանուր մասնակիցների թվի մեջ նրանց կարծիքի տեսակարար կշիռը հնարավոր է, որ լինի փոքր և ոչ լսելի: Անհրաժեշտ է փոփոխություն մտցնել ՇՄԱԳ օրենքի 4-րդ հոդվածի 20-րդ եզրույթում և այն ձևակերպել հետևյալ կերպ՝ «ազդակիր բնակավայր՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա բնակավայրի (բնակավայրերի) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք»:

ՀՀ կառավարության 19. 11. 2014թ. «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կ ա ր գ ը հաստատելու մասին» N 1325-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն, կապված հանրային ծանուցման մեխանիզմների և ազդակիր բնակավայրերի ցանկի սահմանման հետ

ՀՀ կառավարության 19. 11. 2014թ. «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կ ա ր գ ը հաստատելու մասին» N 1325-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետը ձևակերպել հետևյալ կերպ՝ «Ազդակիր համայնքների կամ բնակավայրերի թիվը մեկից ավելի լինելու դեպքում հանրային ծանուցման և քննարկումների կազմակերպումը ձեռնարկողի հետ համատեղ ապահովում է այն համայնքի ղեկավարը, որի վարչական սահմանում նախատեսվում է գործունեությունը՝ ապահովելով հանրային քննարկումներ տվյալ համայնքի բոլոր ազդակիր բնակավայրերում»/: Նույն կարգի 6-րդ կետում անհրաժեշտ է ավելացնել հետևյալ նախադասությունը. «Ազդակիր բնակավայրերի ցանկը հաստատվում է ՀՀ ՇՄ նախարարի հրամանով»/: Դրանով ցանկին կտրվի իրավական կարգավիճակ և

հնարավորություն կընձեռնվի վիճարկելու այն դատարանում: Կարգի 20-րդ կետում անհրաժեշտ է հանրային քննարկման արձանագրությանը կցվող նյութերի ցանկում ամրագրել նաև հանրային քննարկումների տեսաձայնագրության կրիչը և մասնակիցների ցուցակը՝ ստորագրություններով: /Արձանագրությունների մեջ երբեմն խեղաթյուրվում կամ լրիվ չեն քննարկված հարցերը և առաջարկները/:

Մշակել և կիրարկման մեջ դնել «Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասով պահանջվող «Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման» կարգն առ այսօր ՀՀ կառավարության կողմից չի հաստատվել: Դրա փոխարեն 2014թ-ից՝ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, կիրառվում է գործնականության հետևանքով «պատճառված տնտեսական վնասի» գնահատման պրակտիկան:

Մշակել հանքարդյունաբերության հետևանքներից տուժած քաղաքացիներին պատճառած վնասների չափման և հաշվարկման մեթոդաբանություն և պատճառած վնասի փոխհատուցման մեխանիզմներ՝ շեշտը դնելով հանքարդյունաբերող ընկերությունների միջոցներով դրանց վերականգնման վրա՝ առաջնորդվելով «Մեղավորը փոխհատուցում է» սկզբունքով

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի՝ նախատեսվող գործունեության կամ հիմնադրության փաստաթղթի գործողության հետևանքով մարդու առողջության կամ շրջակա միջավայրի վրա հնարավոր ռիսկի դեպքում պատասխանատվությունը կրում է ձեռնարկողը, եթե տվյալ գործունեության վնասակարության բացակայությունը գիտականորեն հիմնավորված չէ: Օրենքի այս պահանջը գործնականում կիրառելի է շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկման համար /առկա են կառավարության համապատասխան որոշումները/ և ըստ դրանց գործնականում կարելի է ընդերքօգտագործողին պատասխանատվության ենթարկել: Ընդերքօգտագործման հետևանքով մարդու առողջությանը հասցված վնասի համար պատասխանատվություն կրելու դրույթն անկիրառելի է, քանի որ Հանրապետությունում հաստատված չեն ծանր մետաղների առողջապահական թույլատրելի սահմանային կոնցենտրացիաները, դատարանում տուժողն՝ ինքը, պիտի հաստատի իր վրա թողած բացասական հետևանքները, ինչը կատարելու համար պահանջվում է լուրջ ֆինանսական ծախսեր, բացի դրանից, տուժողը իր հայցը չի կարող շահել, քանի որ բացակայում են ելային տվյալներ, չկա առողջապահական լաբորատոր գիտահետազոտական ապացուցողական բազա: